



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LGA
2031

1999

LITERATOS

ՊԵՏՈՒԹՅԻՆ ՀԱՅՈՑ

ትግራይ አስተዳደር ከመድናም

ԳՅԱՆԵՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՄ

ՀԱՐԱԳՐԵՑ

ՅՈՎՐԱՆԵՍՈ ՅԵՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

—፩. ማረተምበትዎች—

Պատումցէք մանկանցդ զերբեմն փառսն և
զայգմեան հանգամանս հայրենեաց ձե-
րոց, զի մատաղ միրտ նոցա զուարձացեալ
և զգացեալ միանգամայն գեղեցիկ և տիսուր
յիշտակօք գիտացեն թէ զի՞նչ ունին առ-
նել նմա ի պարտուց իրեանց և յիրաւաց
ժառանգութեանը ։ ։ ։

20-11705

ՅՈՒՆԻՏ ԵՎ ԳՐԱՄԱՍԱՐ

[View Details](#)

33944.3335

Дозволено Цензурою. Спб., 5-го Июля 1878 года.

Digitized by Google

ନ କାହାରୁ ଦେଖିଲୁ ପ୍ରଦୟମନ ପ୍ରଦୟମନ
- ଏ ପାତାମୁଖ ଉଦ୍‌ଦେଶ୍ୟ କାହାରୁ
ଯୁଦ୍ଧକାରୀ ଏବଂ ଅର୍ଥ ଯାହାର କିମ୍ବା ଏବଂ
ଯୁଦ୍ଧକାରୀ ଏବଂ ଅର୍ଥ ଯାହାର କିମ୍ବା ଏବଂ
ଯୁଦ୍ଧକାରୀ ଏବଂ ଅର୍ଥ ଯାହାର କିମ୍ବା

42031-60

0 747273424138 4000221000 02320

মো-০২৮১

ՑԱՌԱՋԱԲԱՆ

ԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐԸ ԶԱՐ ՑՊԱԴՐՈՒԹԵԱՆ

Այս համառօտ Ազգային պատմութեան էր-
բարդ տպագրութիւնը մեր համազգի աշակերտներուն
առաջիններէն աւելի դիւրմբունելի ու զուարձալի
անելու նպատակաւ՝ շատ դժուարութեանց յաղ-
թելով պատկերազարդ արինք, միանգամայն և հարց-
մունքները (որ դասազրքին տասներորդ մասը բռնած
էին) վերուցինք ու նոցա փոխարէն պէտք եղած
գիտելիները աւելցուցինք։ Եւ որպէս զի զրելն ևս
դժուարութիւն չպատճառեն իրենց փոքրութեամբը՝
մեծ զրելով շարել տուինք, յուսալով որ առա-
ջիններէն աւելի օդտակար կլինի աշակերտաց մեր
այս տեսակ աշխատութիւնը։


3. S-U.

ପ୍ରକାଶନ କମିଶନ

www.digitalsignatureindia.com

ու առ այս անուանը միշտ ու ուստա՞ր ու լի է
Տաղակարգիթաց զբանաշը զի՞ զմայ Պապարան ուղար
կանկարը ու վեճովով մի մաս միշտ միշտ առան
շախ ընտեղագուտեր ունչ այստապէս այժմ
շրջակ և մընարթուի , քմիտ պարագիտար խոյն
ծամայ զան բայդ մօստ միշտ առաջ դու պահպան
նոր զան միշտ առաջ ու զմիշտոյնի (միշտ
ու միշտ գր սերդո այլ : զմիշտոյն ու զմիշտոյն
պահպան պահպան մօստ առաջ ու զմիշտոյն
ունչ դու Լոյսուու զմիշտ Ամայ խոյն զան
շրջակ պարագիտար խոյն զանուր միշտ միշտ

- 33 -



ԳՐԻՒԽ ԱՌԱՋԻՆ

ԽԸՆԱՌՈՒԹԻՒՆ

Հ Ե Յ Ա Վ Ա Զ

ԳԱՍ Ա.

Հ Ա յ ի է ն Թ ն լ ւ Ա բ ժ ն ա ն ի .

Մեր Հայ աղքի սկզբնաւորութիւնը .— Հայկ աղքապետ .— Բարիլնի
աշոարակաշինութիւնը .— Բել կամ Ներովիթ .— Հայկաց վերադարձն
ու Հայաստանի մէջ շինութիւններ անելը .— Բելսյ Հայաստան գալն ու
Հայկէն յաղթուիլը .— Հայկաց որպիսութիւնը .— Աս և Նոյեմզար :

Մեր Հայ աղքի սկիզբը ջրհեղեղէն վերջն
եղաւ, և Կ ա յ նահապետի Յ ա բ է ն
որդիէն յառաջացաւ :

Հայոց առաջին նահապետն եղաւ
ՀԱՅԿ անունով քաջ մարդուն մէկը, որ
Յարեթի երրորդ սերունդն էր. վասն
զի Յարեթի որդին էր Գառեշ, Գամերի
որդին Թառիչոյ և Թառդոմայ որդին ՀԱՅԿ:

Հայկայ ժամանակ Նոյայ որդիքը
Հայաստանի մէջ հետզհետէ բազմանա-
լով ու երկիրը քիչ գալով իրենց, սկսան
ուրիշ տեղեր երթալ, որոց մէջ էր և
ինքը—Հայկ: Նոքա իւրեանց ճանա-
պարհորդութեան ժամանակ, երբ Իա-
րիլոնի Անապար կոչուած մեծ դաշտը հա-
սան՝ ամբարտաւանութեամբ ուղեցին
մէկ բարձր աշտարակ շինել այն տեղ,
ուր Աստուած բարկանալով նոցա յան-
դրդնութեանը՝ լեզուները խառնակեց:
Իայց որովհետև այն ժողովրդոց մէջ
աւելի զօրաւոր էր Իւլ կամ Ներքուն
անունով պարծենկոտ մարդուն մէկը,
որ Կամայ թոռը՝ Քուշայ որդին էր,
ուստի և ժողովրդոց մեծ մասը բռնու-
թեամբ և խոստմունքով իրեն հնա-
զանդեցուց, ու նոցա վերայ թաղաւո-
րելին յետոյ՝ ուղեց Աստուծոյ տեղ պաշ-


տուիլ: Եւ ահա այս էր պատճառը,
որ Հայկ Իւլայ ամբարտաւանութեանն
ու յանդզնութեանը չդիմանալով՝ քովը
ժողովեց իւր երեք հարիւր քաջ մար-
դիկը, այսինքն իրեն որդիքը, թոռ-
ներն ու նոցա ընկերացած հաւատարիմ
անձինքը, և Իարիլոնէն վերադարձաւ
ի Հայաստան, ուր մէկ քաղաք շինեց
ու Հայիալին անուանեց, և իւր խոհական
կառավարութեամբը բոլոր Հայաստանի
բնակիչները սիրով հնազանդեցընելին
վերջը՝ տէր և զլուխ եղաւ ամենուն:
Իւլ այս բանս լսելով՝ պատզամա-
ւոր յուղարկեց առ Հայկ որ գայ հպա-
տակի իրեն „Ինչո՞ւ գնացիր այդ ցուրտ
երկրիդ մէջը բնակեցար, ասաց. աւելի
լաւ չէր լինիր թէ որ խոնարհութեամբ
տաքցընէիր քո հպարտութեամբ ցրտա-
ցած բարքդ, և հնազանդելով ինձ հան-

դարտութեամբ բնակէիր իմ երկրիս մէջ,
ուր որ քո սիրտդ ուզենար : « Հայկ Շելայ
կեղծաւորութիւնը գիտնալով՝ խստու-
թեամբ պատասխանեց , լաւ համարելով
քաջութեամբ մեռնիլ , քան երկչուու-
թեամբ գլուխ խոնարհեցրնել այն ամ-
բարտաւանին , որ ինքնիրեն Աստուծոյ
տեղ պաշտել կը հրամայէր :

Պատգամաւորը Շաբիլոն վերադար-
ձաւ , և Շէլ Հայկայ պատասխանը լսե-
լով անհնարին դառնութեամբ կատա-
ղեցաւ , և բազմաթիւ զօրքով ու մեծ
պատրաստութեամբ պատերազմի ելաւ :

Հայկ երբ լսեց Շելայ զալը , իսկոյն
իւր քաջ տղայքը , ծառայքն ու հաւա-
տարիմ մարդիկը ժողովեց և Անայ
ծովուն մօտի ընդարձակ ու յարմա-
րաւոր դաշտին մէջ պատերազմի պատ-
րաստուեցաւ :

ՀԱՅԵԿԱ ԵՍԱՔՈՒԹԻՒՆ :



Իայց որովհետև նախ քան զպատերագմը՝ Ի՞էլ ուղեց տեղեկանալ Հայկայ զօրաց դրութենէն, ու հինգ-վեց հարիւր մարդով զատուած՝ եկաւ Հայոց բանակը դիտելու, որ ըստ այնմ յարմարցընէ իւր զօրախումբը. Հայկ՝ Ի՞ւլայ արածէն օգուտ քաղելով, յաջող միջոց համարեց յաղթութեան. ուստի և շուտով իւր քաջ մարդիկը պէտք եղած տեղերը շարքով կանգնեցուց ու պատերազմն սկսաւ:

Երկու կողմէն բաւական քաջեր ընկան, և պատերազմը երկու կողմէն ևս անպարտելի մնալով, Ի՞էլ զարհուրեցաւ և ուղեց յետ փախչիլ մինչև մնացեալ զօրաց օգնութեան համնիլը: Իայց Հայկ ժամանակ չտալով երկար մտածելու, քաշեց ուժնապէս իւր երեքթեան աղեղը և այնպիսի կերպով

զարկեց Բելայ կուրծքին, որ նետը՝
նորա հագած երկաթի զրահէն անցնե-
լով՝ կոնըկէն դուրս ելաւ, գետնի մէջ
խրուեցաւ. որով այն ահագին ու ամբար-
տաւան հսկան հողի վերայ փռուեցաւ:

Բելայ մարմնը հայկ զմուսել տա-
լով՝ հրամայեց հայաստանի մէջ մէկ
բարձր լեռան վերայ թաղել, որպէս
զի ամենքն եւս տեմնեն այն Աստուծո
դէմ ապատամբած ու հպարտութեամբ
լցուած մարդուն վերջը: Իսկ Բելայ
և նորա քաջ զինուորաց սպանուած
տեղւոյն անունը Գերեզման¹ կոչեց:

Եյտէս ահա աշխարհիս առաջին
սպատերազմն ու առաջին փառաւոր
յաղթութիւնը մեր քաջ ազգապետին
ձեռքովը լինելով, Բելայ մնացեալ զօրքը

¹ Գերեզմանը բառը դէրէ ըստ Հայութին ելած է, որ
կը առանակէ թէ դէրէ (Եսէ) իսկ ամենայն:

փախչել սկսան, և հայկ ազատութիւնը
աշխարհակալութեսէն վեր դասելով՝
Բելայ մարդոց ետևէն չընկաւ, որ
բռնութեամբ հպատակեցընէ նոցա,
այլ յաղթութեան վերայ ուրախացած՝
իւր բնակութեան տեղը, Տուրուբերան
աշխարհի հայր գաւառը դարձաւ, և
հայրաբար կառավարելով իւր հպատակ-
ները, կարգեր, կանոններ դրաւ, զանա-
զան շինութիւններ արաւ, և 400 տա-
րւոյ չափ ապրելէն վերջը ազգին իշխա-
նութիւնը իւր Երևանէ կամ Երանական
որդւոյն յանձնելով մեռաւ:

Հայկայ արած գործերէն յայտնա-
պէս կտեսնուի իւր հոգւոյն կատարելու-
թիւնները: Կորա արտաքին տեսքը,
այսինքն դէմքի գեղեցկութիւնը, մար-
մոյ յաղթանդամ կազմուածքն ու
հսկայական հասակը՝ համապատասխան

էր իւր վեհանձն բնաւորութեանը . և
ինչպէս մեր պատմազրաց հայրը՝ Առվակէս
իորենացին , Մար-Նբասի ստոյգ աղբիւ-
րէն առնելով , Դեղապատշաճ և անձնեայ ,
քաջագանգուր , Խայտակն և հաստա-
բաղուկ էր կատէ , պէտք է երեակայել
որ իւր ժամանակի դիւցազանց մէջ ամե-
նէն նշանաւորն էր Հայկ : Եյս պատճա-
ռաւ է ահա , որ մեր հին և նոր գիտնա-
կան համազգիքը միշտ պարծանք հա-
մարած են Հայկայ փառաւոր անունը
իւրեանց վերայ կրելով ՀաՅ կոչուիլը :

Հայկայ ժամանակ Կ' և իւր Կ' ամանը
կինը վախճանեցան . յորոց առաջինը
Կ' լեռան վերայ թաղուեցաւ , և երկ-
րորդը՝ նոյն լեռան քովը , որ յետոյ
Մարտի , այսինքն Մայր անդ կոչուեցաւ ,
որ Ձք հոյն այսուղ է կնշանակէ :

ԴԱՍ Բ.

Հայէայ յաջրդնելով մինչև Երամ .

Արմենակայ և նորա եղբարց գործունէութիւնը .—Արամայիս .—Շարոյ
շատակեր .—Ամասիայ և շնութիւն երկու գիւղապաշտների .—Գեղամ ,
Հարմայ և Ախակ :

Արմենակ իւր հօրը պէս քաջ ու
հայրենասէր էր : Ուզելով որ Հայաս-
տանի ամեն կողմը մարդաբնակ լինի , իւր
Մանաւաղ ու Խու եղբայրները Հարք գա-
ւառը թողուց ու ինքը Հայաստանի
հիւսիսակողմը գնաց , ուր մէկ բարձր
լեռան մօտ բնակութիւն հաստատեց ,
լեռը Երաժառ անուանեց և իւր բնակած
տեղը՝ Երաժառողն ² :

² Եյս իշխանարձակ գիւղն իւր ջրարբի ու պտղաբեր լինելուն պատ-
ճառաւը հետզհետէ մեծնալով՝ Արարատեան աշխարհի թարդ գաւառն
եղաւ , և երկիրը Ամատունի նախարարութեան ձեռը լինելով , թեմին
առաջնորդները՝ Արտավանեաց Եղիսաբէտանասուեցան : Սորա քանի մի դիւշերը
այլ և այլ պատճառներով նշանաւոր եղան մեր պատճութեան մէջ ,
ինչպէս Օւժէա , յորում թաղուած է Ա. Մերուպ Մաշտոց . Եղիշէտ
յորում հնաւ մեր տօնալը նորոգով՝ Մովսէս թ կաթողիկոսը . Փորիք ,
Ղազար Փարագեցւոյն ծննդեան տեղը . Աւտորուն , որուն մէջ ծնաւ Ներսէս
Երդ հայրենասէր կաթողիկոսը , և այլն :

Երմենակայ միւս եղբարքն ևս չարք
դաւառին մէջ սկսան զանազան քա-
ղաքներ շինել, ինչպէս Մանալիւր կամ
Մանալուկէւր, և հետզհետէ այնքան բազ-
մացան որ հազարաւոր տարիներ ցեղերը
շարունակուելով՝ իւրեանց անունովը Մա-
նալուկէւրն ու Խուճուռնէն կոչուեցան։ Սո-
ցա պէս եղաւ նաև Երմենակայ Բառ
որդւոյն ցեղը, որ Բառնէնիւ ասուեցան։
Խակ ինքը Երմենակ քառասունեվց տա-
րի իշխեց և տէրութիւնը իւր Երամային
որդւոյն թողլով՝ մեռաւ։

Երամայիս իւր հօրը հետևելով իշխա-
նութեան սկիզբները Երարատ դաւա-
ռին մէջ՝ գեհովս գետին մերձակայքը
մէկ քաղաք շինեց, և իւր անունովը
Երամային կոչեց, որ վերջը թագաւորա-
նիստ եղաւ մինչև Հայկազանց իշխա-

նութեան բարձուիլը. իսկ վետը իւր
Երամային կոչմամբը Երամայ կամ
Երամայ անուանեց։
Կպատմեն թէ Երամայիսի որդւոց
մէկը, որ Շառայ կասուէր, սաստիկ շա-
տակեր ու բազմածին լինելուն պատճա-
ռաւ։ Երամայիս Եխուրեան գետին մօտ
եղած պտղաբեր դաշտերն յուղարկեց
նորան որ հանգիստ ապրի, որով և բո-
լոր գաւառը նորա անունովը Շեռակ՝³
կոչուեցաւ։

Երամայիսի տեղն անցաւ իւր Երամային
որդին, որ Երարատեան աշխարհի ամե-
նաբարձր լեռը Մասիս անուանեց։ Սա
երեք որդի ունեցաւ Գեղամ, Փառակ և
Յուլակ անուններով, որոց հետ մէկտեղ

³ Արարատեան աշխարհի Երդ գաւառն էր Շիրակ, որ Մէծին
Տիրատոս ժամանակէն սկսեալ Կամարականաց ձեռքն էր. ոսց Ը-
դարուն մէջ՝ Արարատ բարգաստունոյ Ազուր և Շապուհ որդիքը Արշ-
րունեաց գաւառին հետ մէկտեղ Կամարականաց ցեղէն գնեցին, և այնու-
հետեւ Բագրատունեաց ձեռքը մնաց։

Մասիս լեռան մերձակայքը երկու աշ-
ւան շինեց՝ մէկմէկէ միօրեայ ճանա-
պարհ հեռաւորութեամբ, և Փառոխին
ու Յոլակին ընծայեց, որ յետոյ նոցա
անունովը Փառախու ու Յոլակէն կոչուե-
ցան: Իսկ Գեղամը հետն առնելով՝
Արմաւիր դարձաւ. և երեսուներկու տա-
րի ազգին վերայ իշխելէն վերջը՝ մեռաւ:
Կորա տեղն անցաւ իւր Գեղամ որդին,
որ քիչ ժամանակէն ազգին կառավա-
րութիւնը իւր Հայոց որդւոյն յանձնեց,
գնաց Աւանայ ծովու եզերաց վերայ մէկ
աւան շինեց և իւր անուամբը Գեղամունէն
կոչեց. այս եղաւ պատճառ որ յետոյ
ծովս ևս Գեղամու ծով՝ ⁴ անուանեցաւ: Գե-
ղամ այս տեղերը՝ իւր Ախուն որդւոյն

⁴ Ախոն կղզին անունով՝ Սւանայ ծով կառուի սցում:—Այս
կղզին վերայ շնեց 305-ին մեր Ա. Դրիգոր Լուսաւորիչը Ա. Յարութեան
եկեղեցին, որ հիմա Սւանայ կառուի և Հայաստանի հին ու պար-
ծառ վանքերէն մէկն է:

ընծայեց, և Արմաւիր դառնալու ժա-
մանակը մէկ նոր քաղաք շինեց Գեղամէ
5 անունով, յորում և մեռաւ: Իսկ Աի-
սակ այն տեղերը հետզհետէ շինութիւն-
ներով զարդարեց, որով և բոլոր երկիրը
նորա անունովը Ախուն կամ Աւանէն ա-
սուեցաւ:

Եյսպէս ահա Հայաստանը հետզհե-
տէ իւր խոհեմ նահապետաց հեռատես
կառավարութիւններովը ծաղկելով՝ մեր
երկրի սահմանակից ազգերուն նախանձը
շարժեց, որով և Հարմայ Արմաւիր
քաղաքը քարէ պարիսպով պատեց,
հոյակապ մարտկոցներ շինեց և երեսուն-
երկու տարի իշխելէն ու Հայաստանը
թշնամիներէն պաշտպանելէն յետոյ՝
խաղաղութեամբ մեռաւ:


⁵ Այս քաղաքը Գեղամայ գործնէն թուռը նորոգեց, որոյ անունովը
յետոյ Գառնիք ասուեցաւ: Սլով մէջ Տրդատ թագավորին իւր Խոսրովին
դուխս քրոջը համար մէկ փառաւոր պալատ շնեց, որ 1680 թուակա-
նին երկրաշրթէն կործնանեցաւ: Եւ ահա այս էր պատճառը որ մեր
վերջին մատենագիրները՝ Գառնիքն կասէն թուր Տրդատոյ:

ԳԱՍ Գ.

ԵՐԱՄ ԼՆԻՐԱ + ԱՂՅ-ՌԻ-ՆԻ-ՆԵՐԸ:

Արամ, առաջին աշխարհակալ.—Նիւքար, Բարչամ և Գայապիս Խմանաց յաղթուելը. —Մշակ սպարապետը մարզպան կը գրուի Կապադովիոյ մէջ. —Արամ հրաման կուտայ իւր օտարազգի հաղոտակներուն հայերէն խօսելու. —Մէր ազգը Արամայ անունով Արձն կամ Էրժնէ կիուչուի. —Նինս մարդաբանազրդ թագ կուղարկէ Արամայ. —Արամայ պատմութիւնն ու վախճանը :

Արամ իւր հայրենասիրութեամբը, ընական խելացիութեամբն ու պատերազմի յարմարութեամբը Հայկազանց մէջ ամենէն մեծանունն եղաւ: Խորենացին թէև Արամայ մեծագործութեանց հաղեւ թէ մէկ քանի բանը կյիշէ „Աշխատասէր և հայրենասէր“ անուանելով զինքը. բայց այն երկու բազմիմաստ բառերը բաւական են ցուցընելու թէ ինչ նշանաւոր մարդ եղած է մեր երկրորդ ազգապետը—Արամ: Սորտ մեծամեծ յաղթութեանց առաջինն այս



էր, որ Երբ Հայաստանի արևելեան
կողմերուն վերայ Վարաց Նիւռա-
նին բոնանալը տեսաւ, յիսուն հազար
քաջ զօրք ժողովեց սաստիկ կոտորած
արաւ, Նիւքարին բոնեց Արմաւիր բե-
րաւ և այն ժամանակի քաղաքակա-
նութեան համեմատ հրաման արաւ, որ
մէկ բարձր աշտարակի ծայրը հանելով՝
Երկաթէ ցից զարնեն այն գոռող ճա-
կատի վերայ, որ անիրաւութեամբ կու-
զէր Հայոց իշխանական պսակը յա-
փշտակել: Արամ Նիւքարի Երկրին վե-
րայ հարկ դրաւ մինչև Զարասոր ⁶ լեռ,
և Երկրին կառավարութիւնը Վիսակեանց
յանձնեց:

Արամայ Երկրորդ պատերազմն Եղաւ
Բաբելացւոց Շառշահ ⁷ իշխանին դէմ, որ

⁶ Արապատական աշխարհին մէջ:

⁷ Այս այն Բաբելոն է, որոյ մասմած քաջութեանց համար
Ասորիք աստուծոյ տեղ կպաշտէին:

քառասուն հազար հետևակ և հինգ հազար ձիաւոր զօրքով ճայաստանի վերայ վազեց. բայց քաջայաղթն Արամ յանկարծ վերայ համնելով՝ թշնամւոյն զօրքին կէսը կոտորեց, կէսը հալածելով՝ Կորդուաց ազգին մէջը ցրուեց և Բարշամին այլ բռնելով սպաննեց:

Երրորդ յաղթութեան վերայ այսպէս կպատմէ Խորենացին. Կապադովկացւոց Պայտապէս իշխանը լսելով որ Արամ քառասուն հազար զօրքով իւր երկրին մօտերն եկել է, և վախնալով որ Կապադովկիոյ ևս տիրէ, բոլոր ուժովը Արամայ դէմ ելաւ. բայց Արամ, սորա ևս սաստիկ կոտորածով հալածելէն ու մինչև Միջերկրական ծովուն մէկ կղզին փախցրնելէն վերջը՝ Քրիստոսէ 1769 տարի յառաջ բոլոր Կապադովկիոյ տիրեց, Մշտի անունով քաջե հաւատարիմ

իշխանը, որ իւրապես կամ կուսակալող դրաւ այնտեղ, քազաքին մէջ տասը հազար զօրք թողուց և հրաման հանեց. որ իւր բոլոր օտարազգի հպատակները մեր ազգային լեզուն սովորելով՝ հայերէն խօսին: և այս ամենահայ մասն Խակ Հորբորդ յաղթութիւնն այս էր, որ Կուրագետէն անցնելով՝ Արացիներն ու Ազգուանքը հնազանդեցուց և հարկատու արաւ զիրենք:

Մշտի իշխանը՝ Արամայ հրամանաւ Կապադովկիոյ մէջ մէկ քաղաք շնեց և իւրա անունովը Մշտի անուանեց⁷, որ Կապադովկացիք լաւ հնչել չկարողանալով՝ Մաժտի կասէին: Այս քաղաքն էր որ վերջը Տիգրան երկրորդի քրոջ որդին՝ Փոքը Միջերկրատը՝ նորոգելով ու

⁷ Այս ժամանակէն սկսած Յամերը՝ Փաք Աստացի այս մասը՝ Աբգաւ անուանել:

ընդարձակելով՝ ի պատիւ Հռովմայեցոց Յուլիս Աւառը ինքնակալին՝ Աւառիս անուանեց, որ հետզհետէ աղաւաղուելով՝ այժմ գայուեցի կամ՝ Դայուեցի կասուի⁸:

Դոկ Երամ իւր նոր տիրած սահմանէն մինչև իւր բուն սահմանը երեք մասն բաժանելէն ու Երաջն, Երևորդ և Երրորդ Հայութ անուանելէն յետոյ՝ տեսաւ որ Հայաստանի վիճակը բաւական ապահովցած է թշնամեաց յարձակմոնքէն, սկսաւ մեր երկրի բարեկարգութեանը վերայ հոգ տանել և նոր նուածած երկիրները հայրաբար ինսամել. որով Երամայ քաջայաղթ անունը օտար աղգաց մէջ այնքան տարածուեցաւ, որ մեր ազգը նորա անունով սկսան Երէն կամ Երթն (Երամեան) կոչել և մեր աշխարհը Երթնէս:

⁸ Այս քաջաքը հետզհետէ ծաղկելով այնշափ բազմամարդ եղաւ, որ Ասդերիս կայսեր ժամանակը, երբ Պարսից Շակուհ թագաւոր արքեց կեսարիս՝ 400,000 բնակիչ դաւագրին մէջ:

Մինչդեռ Երամ այսպիսի բարեկարգութեանց հետ էր, և ահա Ասորեստանի մէջ թագաւորեց Երամ: Սա իրմէյառաջ եղած քաջերուն պատմութիւնը կայուալով՝ երբ տեսաւ որ Ենլայ սպաննողը մեր Հայկ նահապէտն եղած է, միտքը դրաւ պատերազմի ենել որ նորա յաջորդներէն առնու վրէժը. բայց երբ մեր մեծանուն աշխարհակալին քաջութիւններն իմացաւ, ոչ միայն վախնալով յետ կեցաւ դիտաւորութեանէն, այլև Երամայ հետ բարեկամութիւն հաստատելու համար՝ շնորհաւորելով նորա յաղթութիւնները, մարդարտազարդ թագ յուղարկեց իրեն: Եյսպէս ահա Երամ, Հարմայի որդին՝ 58 տարի Հայաստան աշխարհը կառավարեց՝ տէրութեան սահմանները զիսցաղնական քաջութիւններով ընդարձա-

կեց, մեր մայրենի լեզուն Կապադովիկիոյ
մէջ տարածեց և իւր քաջահռչակ ու
պանծալի անունը մեր ազգի անուան հետ
անխղելի կապով անմահացնելէն յետոյ՝
տէրութեան իշխանութիւնը իւր Եւայ
որդւոյն յանձնեց ու Քրիստոսէ 1769
տարի յառաջ մեռաւ:

Երամ, իբրև երկրորդ ազգապետ,
իբրև առաջին աշխարհակալ Հայկա-
զանց և իբրև ճշմարիտ Հայրենասէր
նահապետ՝ տարակոյս չկայ որ ժամա-
նակաւ իւր ընդարձակ պատմութիւնն
ու զանազան քաջութեան ստորագրու-
թիւնն ունեցած է⁹, բայց որովհետեւ
մէկ կողմէն ժամանակին հնութիւնը և
միւս կողմէն մեր բազմաթիւ թշնա-

⁹ Արամայ բազում գործք քաջութեան պատմն... բաց զընդար-
ձակութիւն պատմութեան սորա և զգործութեան... Հաւանեցաք
անցանել սակաւոք:

մեաց յարձակմունքն ու աւերմունքը
թողուցած չեն դժբաղդաբար այն թան-
կագին հնութեանց պատմական աղ-
բիւրները մինչեւ ի մեղ համելու, բաւա-
կանանամք Խորենացւոյ այս համառօտ-
բայց իմաստալի խօսքերը կարդալով.
„Սա (Երամ) աշխատասէր ու հայրե-
նասէր մարդ լինելով, լաւ կհամարէր
իւր հայրենեաց վերայ մեռնիլը, քան
թէ տեսնել օտար ազգերու ոտքը Հայ-
աստանի սահմանէն ներս կոխածն ու իւր
արիւնակից ազգայնոց վերայ տիրապե-
տածը“¹⁰:

Եյս խօսքերէն յայտնի կերպով կտես-
նուի, որ Երամ շատ լաւ հասկացած է
ՀԱՅՐԵՆԻՔ ասուած սրբազնն բառին ընդ-

¹⁰ Սա այլ աշխատասէր և հայրենասէր Եղեալ... լաւ համարէր
զմռանեն ի վերայ հայրենեացն, քան թէ տեսանել զրդիս ոտարանաց
կոխելով զսահմանու Տայրենիս, և Հարազատից արեամնորա տիրել արանց
օտարածնաց:

արձակ մեկսութիւնը, որուն սիրոյ կրա-
կովը վագուած՝ իւր բոլոր հանգատու-
թիւնը՝ աշխատութեան, և իւր իշխա-
նական զուարձութիւնները՝ երկարացուն
պատերադմներու զոհելով, իրաւամբ իսու-
նարհեցոց այն հագարտ ու զուող ան-
ձինքը, որք միայն իւրեանց աշխարհա-
կալութեան անկուշտ բաղձանքը լեցը-
նելու համար չայաստանի վերայ կվա-
զէին. և արդարացի կերպով տիրեց այն
երկիրներուն, որոց կառավարիչներն ու
զեցին կամ բուն Ծրաբայ և կամ նորա
սիրած նուիրական հայրենեացը մաս-
հասցընելու; Յանձնաւ մասնաւուն ու լ

Սորա ասկացոյցն այն է, որ Մթամ
իւր թշնամիներուն յաղթելէն վերջը
միտքը չդրաւ որիշ երկիրներու տիրել
այդ չայաստանը թշնամիներէն ապա-
հովածած տեսնելով՝ իւր նորանոր բա-



ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ.

ըԵկարդութիւններով՝ հպատակաց վե-
ճակը բարոքելու զբաղեցաւ: Այսպիս
ականանելու մաս վահանական է բարձր
գույքուն ու սահմանական զարդ պատճեն:
Գլուխէն միւլ գլուխը.
Արաց գեղեցիկն անունով՝ Հայաստանը Արարատեան աշխարհ կեռչոի: —
Համբամ թագուհին պատերազմն ու Շամբամներու քաղաքին շնուռ-
թիւնը: — Կարդոս և Շամբամ: — Անուշաւան պատամին գերութենէն աղա-
տիկն ու թագաւորեկը: — Զարմացր և Սկայողութեաջ նահապետաց գործերը:


Արայիւր հօրը նման հոգ տանելով
Հայաստանի բարԵկարդութեանը, շատ
պատիւ ընդունեցաւ: Վինոսմէն: և իւր
ընակած աշխարհը (որոյ գլխաւոր քա-
ղաքն էր Արմաւիր) հետզհետէ այքան
շինցուց, որ իւր անունովը Արարատի կամ
Երարքեան կոչուեցաւ: Այսպիսի այլառան,
այսա իւր արտաքին տեսքին համար
Երայ Գեւլուն ասուեցաւ, և այն էր պատ-
ճառը որ Ասորեսց Վինոս թագաւորի
Շամբամ: անունով կինը կոսիւր էր կամը:

մահուանէն վերջը՝ Արայի հետ կարգախր
ուզելով, խոստացաւ նորա որբիրեն հետ
մէկտեղ Ասորեստանի ևս թաղաւորէ
Արայ. բայց երբ վերջինս իւր առաքի-
նութիւնն ու ողջախոհութիւնը պահե-
լով՝ յանձն չառաւ, Շամիրամ պատեշ-
րազմի Ելաւ Արային դէմ, և կոիւր
տաքցած ժամանակ՝ Արայն զարնուեցաւ
ու մեռաւ, թէւ Շամիրամ պատուիրած
երիւր քաջերուն, որ ողջ ըռնեն զինքը
Շամիրամ մեր աշխարհի պտղաբեր
հողը, մաքուր ու դովարաբօդը, աղքիւր-
ներուն ու դետերուն շատութիւնն ու
յստակութիւնը տեսնելով՝ ուզեց իրեն
մէկ ամարանսց շինել, այս բանիս հա-
մար Ազթամարայ ծովուն եղերքն ըն-
տրեց ու այստեղ մէկ ամսւր բերդաքա-
զաք շինել տուաւ Համբանտէրո անունով,
որ յետոյ Առ կոչուեցաւ:

Հայոց իշխանութիւնը Շամիրամ
յանձնեց Արայի կարգութիւնը, որուն
հետ միացած՝ իւր Նինուա անունով ապրու-
ամբ որդւոյն գէմ պատերազմի ելան
և երկուքն ևս յաղթուեցան ու մեռան:
Կարդոսի տեղն անցաւ նորա Անու-
շառական որդին, որ թէւ իւր տասնեչորս
տարեկան հասակին գէրի ընկած էր
Նինուասայ ձեռքը, բայց իւր սիրելի
լինելովն ու բարեկամաց միջնորդու-
թեամբը ազատեցաւ գերութենէն, Եկաւ
իւր հայրենեացը տիրեց, և վաթսուն
երեք տարի ազգը կառավարելէն յետոյ
մեռաւ:

Պատմութիւնը կաւանդէ թէ Անու-
շառանի ծննդեան ժամանակ, իւր Կար-
դոս հայրը՝ Արմենակայ տնկած Սոսեաց
անտառին նուիրեց զինքը, այս պատ-
ճառաւ Անուշաւանը՝ Սոսեանուէր կոչուեցաւ,

որով և այն ժամանակի չայերը կարծելով թէ աստուածներ կը բնակին այն անտառին մէջ, նորա նուիրուղը, և մանաւանդ Անուշաւանին՝ սուրբ Կրչամարեին: մաքան ճիրակ, ու մզայիկ: և
— Անուշաւանի վերայ թէև քիչաբան կայ դրուց մեր պատմութեան մէջ բայց խորենացւոյ ու Շատահանձար յիր և ի բան: խօսքերէն կիմացուի, որ ինչպէս պէտքն է բարակ քաղաքականութեան տէր եղած է Անուշաւան: և յիշրաւի, սորա մեծ հանձար ունենալը այս բանէն ևս կերեի, որ նախ իւր քաղցր ընաւորութեամբն ու հեռատեսութեամբը բարելացւոց Ախուաս թաղաւորէն իւր հայրենական ժառանգութիւնը հետզհետէ ձեռք բերաւ՝ առանց որ և իցէ արիւնչեղութեան, և ապա երկար ժամանակ թաղաւորելով՝ աղդին մէջ զաւ:




ԿԸՐԻԿՈՍ ԵՒ ՇԱՄԻՔՈՄ.

նազան բարեկարպով թիհններս արաւ, ու
բով այկազանցանուանի թափառուաց
կարդն անցան միջանկա՞օ. դան զգոր
Ենուշաւանը որովէետե անզաւակ եր,
այլայ ցեղէն մէկմէկու ետեէ զանազան
անձինք իշխեցին մինչև Թարոյրի թա
զաւորելը, որոց անուները միայն գրուած
են պատմութեան մէջ, և են Գորէու, Ար-
քու, Օքուան, Փառան, Օուր, Հառան կամ Հա-
նու, Վարչու, Հայուան առաջին Աճուան առաջին,
Ծառին Ծառարը առաջին, Ծառաջլան կամ
Երաւարազը շինեց Ա ասպարականի
մէջ այլ և արրոյը, Ա զուան, Ա պա, Գ արտան
հայուան առաջին, Բնյան, Գ ալու, Հ օրոյ և Օ արմայրը:
Օ արմայրի իշխանութեան ժամանակ
Յունաց և Տրոյացոց մէջ պատերազմ
բացուելով՝ Տարոյացոց Պատմութեան թափա-
ռորը օգնութիւն խնդրեց Ասորեստան-
ցոց Տեղանութեագութեան և մեր Օ ար-

մայր նահապետէն։ Տեսամու չկամեա
նալով անձամբ պատերազմի երթար,
զօրքը մեր Օքարմայրին յանձնեց, և սա
իսր զօրաց հետ միացընելով՝ Տրոյիա
փաց, ուր պատերազմն սկսուելուն պէս՝
թէե Հեկտորի հետ միացած մեծամեծ
հարուածներ արին, բայց վերջը Յոյնք
աւելի զօրաւոր գտնուելով՝ երկուքն ևս
Եքիլէսէն սպանուեցան։

Օքարմայրէն յետոյ տամներկունաւ
Հաղետներ նստան Հայաստանի մէջ,
որը նշանաւոր գործ չանելով՝ անունն
ները միայն գիտեմք պատմութենէն,
այսինքն՝ Շահարէ Ա, Պէրճ Ա, Վէքուն, Պէրճ
Բարազուն Երկայնակաց, Հայ, Յուսուն, Սքահ Ա,
Ասյակի Փառանապ Ա, Փառանի Ա, Սիայրդի,
Վերջինս Փառնակ Երկրորդի անհոգու
թենէն Եսորւոց ձեռքն անցած քաղաք-
ները կրկին գրաւեց ու 17 տարի Հայ-

ՏԱՐՄԱՔ, ՔՈ ԱՆԴՎԵԼՏ.



աստանը կաւավարելէն յետոյ՝ տէրութիւնը իւր Պատրիարքի որդւոյն թռպուց, և ինքը Քրիստոսէ 748 տարի յառաջ մեռաւ:


ԹԵԳԵՆՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՅԱԵԶՆՅ
Պատրիարքի մէնլ Հայկազնուց Առաջարկութիւնները:

Պարսկ առաջն թագավոր. — Հայկակ Ա. — Երաւանդ Ա. — Տիգրան Առաջնի գործերը. — Աժդահակոյ խարդախութիւնն ու Տիգրանուհոյ խոհեմութիւնը. — Վահագն՝ որդի Տիգրանայ. — Վահ Շամբարամակերոսը կը նորոգէ. — Տիգրան Ա. — Աահէ՝ զերջն թագաւոր Հայկազնուց.

Պարոյրի ժամանակ Առորեստանի մէջ Սարդանապաղ անունով մէկ անհոգ թագաւոր կար, որոյ իշխանութեան տակ էին Մարք, և որոց վերայ կուսակալ գրուած էր Վարբակէս մեդացին: Այս կուսակալը Արդանապաղին դէմ ապստամբելով՝ դաշնակից եղաւ մեր Պարոյր նահապետին ու Բարիլոնի բէնէն իշխանին հէտ, և Նինուէի տիրե-

լին վերջը երկու սին կամ թագ կամ թառ
գաւորական գաւաղան տուակ, որով
Պարոյր Հայկացանց այշխանութեան
առաջին պատակաւոր թագաւորն¹²։ Եղամ:

Պարոյրի ժամանակ Ասորւոց Սկզնե-
քերիմ թագաւորի Արքունիքու Անաստա-
ռոդիքն իւրեանց Հայրն սպաննելով
Հայաստան փախան, յետոյ մեծամեծ
նախարարութիւններ ձևացան՝ Անաստան
կամ Աստուն, որպէս նաև Երծրունիու և
զաւանի անոններով Ախմէկ Պարոյր¹³ 48
տարի թագաւորելին յետոյ՝ աղջին
կտուավարութիւնը իւր Հրաչեայ որդուոյն
յանձննելով մեռաւ։ Այս Սահմանական
Պարոյրէն յայցի թագաւորեցին.
Հրաչեայ, Փառաւառայ Ծ, Պաճոյն Առանի, Փառա-
և Հայկան Ծ։ Ա Երջինս Հարեւացւոց Նա-
բուգողնոսոր թագաւորին յետ միա-



Հայուս Ի Երանութեան Հայաստան Վերստարաւու.

¹² Այսրոյ էն առաջ թէե Հայր Ասորեստամի Խշանութեան թագ
չէին, բայց մըր ազգի նահապեաները թագուուր չէին կուտած։

նալով Արտօքաղեմի վերայ գնաց, և յաղը
թութեամբ վերադառնալու ժամանակ՝
գերիներու մէջէն հետը մէկտեղ Հայու-
աստան բերաւ Շահնշապ անունով Հրեայ
իշխանը՝ իւր ընտանեօքն ու աղքա-
կաններովը, որով Հայերը մեծ հանդի-
սով ընդառաջ գնացին և անձնանուէր
հպատակութեամբ ընդունեցին Հայկակ
երկրորդին։ Շամբատայ Բագրատոս որ-
դոյն Ճիւղէն՝ Տագրատունեաց նշանա-
ւոր ցեղն յառաջացաւ, որով այդ ցեղի
մէջ շատ անձինք Ամբար կոչուեցան՝ Շամ-
բատի անունով եւ նորա որդի Ամբար
անունէն—Ելսու։ զար մայնացուամբ

Հայկակ երկրորդին տեղն անցաւիւր
որդին Երանեաւ Ա որոյ քրոջը հետ Վարդ-
էն իշխանը կարգուելով՝ Քամաղ պե-
տոյն վերայ եղած Արտիմիդ քաղաքին
տեղը Վարդէն աւանը շինեց, որ յետոյ

Վաղարշ թագաւորը նորսպեց և վկաս
պարզաբանուած անուանեց և Այս Երաժանգը մի
այն գ տարի թագաւորելով՝ Առհաւաքէաց
տառեցաւ առն առջն և աղջ մասս
և Երաժանպայ տեղն անցաւ իւր սրդին
Տիգրան առաջին, որ Հայկազանց մեջ
աշխարհակալութեան կողմանէ ամենէն
երևելի թագաւորը կհամարուի Սա
Հայկայ ու Երամայ նման հայրենասիւ
րութեամբ լցուած շրջտկայ աղգաց տիւ
րեց և Յոյները նուածելով՝ ընդար
ձակեց իւր տէրութեան սահմանները,
ժողովրդեան մէջ կարգ կանոն դրաւ և
զնուորական դասը կրթութիւններով
բարեկարգեց:

Մարաց Եժտահան թագաւորը թշնաւ
մացաւ Տիգրանայ հետ, Երբ սա Պար-
սից կիւրոս թագաւորին հետքարեկաւ
մութեան դաշինք դրաւ. բայց տեսներով



ՊԵՐՈՅՐ, ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱԿԻՐ.

որ քաջութեամբ պիտի չկարողանայ
Տիգրանայ դէմ ենել, առ երեսս բա-
րեկամ ձևացաւ. նորա Տէ՛րանուհի քոյրը
խարդախութեամբ կնութեան առաւ,
որուն իւր սրտի չարութիւնը յայտնե-
լով՝ ուզեց հաւատացընել թէ նորա
Տիգրան եղօր Ախւրոսին հետ միանա-
լուն պատճառն այն է, որ իւր (Եժ-
դահակայ) փառացը նախանձելով կուզէ
Մարաց թագաւորութիւնը յափշտա-
կել. „ուստի պէտք է եղօրդ կեանքը
մէկ կերպով վերցընելու հնարքը դրտ-
նես, ասաց, որ մեր կեանքը ապահով-
նայ. ապա թէ ոչ տիկնութենէ կը
զրկեմ քեզ“:

Տիգրանուհին թէև ի սկզբան առ
երեսս ուրախութեամբ յօժարացաւ,
բայց յետոյ Եժդահակայ չար դիտա-
ւորութիւնը հաւատարիմ մարդկանց

ձեռքով ծածկաբար իմացուց իւր Տիգրան Եղբօրը, և սա խոհեմութեամբ պատերազմն ուշացնելով՝ նախ իւր Տիգրանուհի քոյրը Աժդահակայ ձեռքէն ազատեց, և ապա Վիւրոսի հետ մէկտեղ Մարաց աշխարհը մտնելով՝ անձամբ սպաննեց Աժդահակին, որով կատարեալ հատուցումն եղաւ նորա սոսկալի Խորհրդոյն:

Եյսուհետեւ Տիգրան Աժդահակայ վնայլ անունով առաջին կինը, որդիքն ու Մարաց աշխարհէն բերած տասը հազար գերիները Հայաստանի Արարատ նահանգին մէջ բնակեցուց, յորոց սերեցան Աւազանունի կամ Մուրացան կոչուած ցեղը: Խոր շինած Տէ՛րտոնիւր (Դիարբէքիր) քաղաքը Տիգրանուհի քրոջն ընծայեց, յորմէ Ոստան կամ Ոստանի ասուած ազատ ցեղը յառաջացաւ. և 45

տարի հեռատեսութեամբ ու խոհեմութեամբ Հայաստանը կառավարելէն վերջը՝ Քրիստոսէ 520 տարի յառաջ վախճանեցաւ:

Տիգրան առաջնոյ երեք որդւոց կըտսերն էր Վահագն, որ իւր քաջութիւններուն համար Ժամանակակիցք շատ երգեր յօրինեցին վրան, և Վրացիք նորա արձանը կանգնելով՝ երկար ժամանակ գինքը պաշտեցին: Սորա ցեղը Վահանին կամ Վահնանին կոչուեցաւ:

Վահագնէն յետոյ որդւոց որդի յաջորդելով՝ թագաւորեցին Աւազան, Ներսէհ, Օզրէհ, Արդամ և Բայրամ, որոց վերայ մասնաւոր պատմութիւն չկայ: Բայդամէն վերջը թագաւորեց Վահն, որ Շամիրամակերտ քաղաքը նորոգելով՝ իւր անուամբը Ան կոչեց: Սորա յաջորդն եղաւ Վահէ, որ Աղեքսանդր մակեդո-

նացւոյն դէմ պատերազմած ժամա-
նակը մեռաւ:

ԴԱՍ Ե.

ԿՈՒՍԱԿԱՆ

ՄԵՀՐԱՆԻՆ ՀՅԱԼ ԵՐՄԱ-ՊԱՐ ՎԵՐՃԻՆ.

Միհրան առաջին կուսակալ. — Ագուարդ քաջ նախարար Մինեաց. — Արդիկան և Եւմենէս. — Արտաւազ քաջ իշխան Հայոց. — Արտաշմաս և Զահրաս. — Արտաւազդ վերջին կուսակալ.

Ա ահէէն յետոյ իշխեցին Հայաս-
տանի Մակեդոնացւոց կամ Ըստրոց
թագաւորներէն յուղարկուած իշխան-
ները, որք Կուսական կառուէին: Առցա մէջ
առաջինն եւաւ Մէհրան, որ հինգ տարի
Հայաստան կենալէն վերջը՝ Եղեքսանդրի
Գլուխէնուս զօրապետը յետ կանչեց զինքը,
և տեղը Կէսողաղմէն անոնով մէկ իշ-
խան յուղարկեց, որ իւր չար բնա-
ւորթեամբը մեծ նեղութիւն տարով

Հայոց, Երանեար անոնով Մինեաց քաջ
նախարարը՝ Կապադովկացւոց թագա-
ւորի Մրիթէոս որդւոյն խորհրդովն ա-
պրստամբեցաւ Մակեդոնացւոց տէրու-
թենէն ու Կէոպտղոմէոսի դէմն ենե-
լով՝ զինքը Հայաստանէն հալածեց:

Պերդիկաս Ծդուարդայ ապստամ-
բութիւնը լսելով իսկոյն Կապադովկիոյ
Եւհենէս կուսակալը յուղարկեց, որ բըռ-
նութեամբ հնազանդեցընել չկարողա-
նալով՝ մարդ յուղարկեց Ծդուարդայ
որ կրկին ընդունէ Կէոպտղոմէոսին,
և տարուէ տարի նորա ձեռքովը տրուի
Մակեդոնացւոց՝ Հայաստան աշխար-
հին հարկը:

Ծդուարդ ընդունեց Կւմենեսի առա-
ջարկութիւնը, վասն զի այնուհետեւ
Կէոպտղոմէոսը իբրև Ծդուարդին երկ-
րորդը կեցաւ Հայաստանի մէջ, մին-

չե որ Եւմենէսէն ապստամբելով՝ պատերազմին մէջ սպանուեցաւ. յետ որոյ Եղուարդ միապէտ մնաց և 33 տարի իշխելէն վերջը մեռաւ:

Եղուարդէն յետոյ իշխեցին Հայաստանի Հրանք և Երաստան: Վերջինս Ակելիկիացւոց (Ասորւոց) Ենտիռքոս Գթագաւորէն ապստամբելով սկսաւինքնագլուխ տիրել Հայաստանի. բայց երբ Ենտիռքոս շատ զօրքով Հայաստանի վերաց եկաւ, Երտաւաղ ընծաներ յուղարկեց ու սիրտն առնելով իսոստացաւ հարկը վճարել. և այնպէս 50 տարի իշխելէն վերջը մեռաւ:

Երտաւաղին տեղը կուսակալ դրուցան Երտաշիա և Զահրան հայ իշխանները, որք Հռովմայեցւոց օգնութեամբը Ակելիկիացւոց դէմ ապստամբելով՝ Զահրատ Փոքր Հայոց վերայ թագաւորեց,

իսկ Երտաշիաս Մէջ Հայոց վերայ, ուր Երտաշատ քաղաքը շինեց: Երտաշիասէն յետոյ իշխեց Հայաստանի՝ իւր որդին Երտաշիա՝ վերջին կուսակալը, որ տասը տարի իշխելէն յետոյ Պարթեաց Երշի թագաւորէն յաղթուեցաւ:

ՔԱՂՋՈՒՄ ՊԱՏՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅԿԱԶԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

ԴԱՍ Ը

ՀԱՅՀԻՆ ԹՅԱԼ ՊԱՐԱՅԻՆ Առաջարկելու.

Մեր աղջի նախահայրն եղաւ Հայէ, որ թարգումայ որդին էր կամ ՚Նոյ նահապեաի թռուան թռու: Աս Բարելոնի աշտարակաշինութեան ժամանակ Իւելայ. յանդգնութիւններուն համբերել չկարողանալով, իւր որդիին ու թռունքը առաւ Հայաստան գարձաւ, ուր յիսուն տարի նահապետութիւն անելով՝ Քրիստոսէ 2026 տարի յառաջ մեռաւ:

Հայկայ որդին Երժենակ՝ որ իւր հօրը պէս քաջ ու հայրենասէր էր, Երմաւիր քաղաքը շինեց, Հայաստանի ամեն կողմը շէնցուց, և իւր Մահամալ ու Խոր եղբայրները այլ և այլ տեղեր յուղարկեց քաղաքներ շինելու և Հայաստանը մշակելու:

Երմենակայ տեղն անցաւ իւր որդին Երամայիս, և սորա յաջորդն եղաւ Եմասիա, որ Երարաս լեռն իւր անունովը Մասիս անուանեց: Իրեն յաջորդեց Գեղամը որդին, որ Վեանայ ծովակը՝ Գեղաման անուանեց: Գեղամայ յաջորդն եղաւ Հարսմա, որ զանազան շինութիւններ արաւ Հայաստանի մէջ և տէրութիւնը Երամ որդւոյն թողլով մեռաւ:

Երամ հայրենասէր ու քաջ լինելով՝ Հայաստանը այնպէս բարեկարգեց, որ բնոր մերձակայ ազգերը մեր աշխարհին վերայ նախանձելով՝ հետզհետէ պատերազմի եղան նորա դէմ. բայց ամենքն ես յաղթուեցան, վասն զի Երամ, Մարաց Կիւքար իշխանը բանելով՝ Երմաւիր քաղաքին մէջ ցից զարկաւ ճակատը, Ծարելացւոց Ծարշամ իշխանն սպաննեց և Կապալովկացւոց Պայապիս իշխանին հալածեց ու նորա երկրին տիրելով՝ հրաման տուաւ բնակիչներուն հայերէն իսօսելու, որով Երամայ բաջութեանց համբաւը մինչև հեռաւոր տեղեր երթալով՝ մեծամեծ թագաւորք անդամ սկսան վախնաւ իրմէ, ինչպէս Եսորւոց Կիմոս թագաւորը, որ Երամայ յաղթութիւնները լսելով՝ մարգարտազարդ թագ յուղարկեց ու բարեկամութիւն հաստատեց հետը: Եյս մեծանուն նահապեաի անունովն է որ օտարասղորդ մեր աղջը Երմէն կամ Խրմէնի և մեր երկիրը Երմենիա կանուանեն:

Երամայ յաջորդն եղաւ իւր որդին Երայ Գեղեցիկ, յետոյ Կարդոս, Անոշաւան և այլն, լնդ ամենայն մինչև Պալոյր 35 նահապեաք (1769—748), որը ամենը մէկանը 1021 տարի իշխեցին. Առա շաբին անունը և քանի մի հասին համառօտ պատմութիւնը միայն հասած է մեզ:

ԴԱՍ Թ.

Պարուցէն մինչև Հայկազնաց Աստվածութեան
Հերթակալը:

Հայկազնաց տէրութեան առաջին թագաւորն
եղաւ Պարոյր, որ Մարտց Վարբակէս իշխանէն
թագ և թագաւորական գաւազն ընդունեցաւ:
Արքա ժամանակ Հայաստան փախան Եսորւց Աբ-
նեքերիմ թագաւորի որդիքը, յորոց Արքունիւնի և
Անպատճեն մեծ նախարարութիւնները ձեւացան:

Պարոյրէն մինչև Տիգրան թագաւորեցին—Հա-
շեայ, Փառնաւաղ երկրորդ, Առոնակ, Փաւոս,
Հայկակ երկրորդ և Արտանդ առաջին (700—565),
որոց վերայ պատմութիւն չունենալով՝ միայն այս-
քանս գիտեմք, որ Հայկակ երկրորդը Ռաբելցոց
Կաբուգորդոսոր թագաւորին հետ Արտանդէնի
տաճելու համար նիզակակցութիւն անելով՝ յաղ-
թութեամբ վերադարձած ժամանակը՝ Հայաստան
րերաւ Շամբառ անունով հրեայ իշխանը, որոց Ռա-
զարատ որդիէն Ռազրատունեաց ցեղը յառաջացաւ:

Տիգրան առաջինն էր Արտանդ առաջնոյ որ-
դին, որ իւր վառ հայրենասիրութեամբը, զանա-
զան քաջութիւններով ու ժողովրդոց և զինուորաց
մէջ արած բարեկարգութիւններով՝ Հայկազնաց
ամենէն երևելի թագաւորն եղաւ: Աս շնեց Տիգ-

րանակերտ քաղաքը և իւր Տիգրանուհի բրոջն ըն-
ծայեց, որ Մարտց Եմդահակ թագաւորի կինն էր:

Վահագնէն մինչև Վահէկ եղան ութը թա-
գաւորք, այսինքն Վահագն, Եռաւան, Նելսէս,
Օպրեհ, Երմոդ, Բայգամ, Վան և Վահէկ (520—
328). Վերջինս Եղեքսանդր Մակեդոնացիէն յաղ-
թուելով մեռաւ և Հայկազնաց տէրութիւնը վեր-
ջացաւ:

Պատմութիւնը կաւանդէ թէ Վահագնը իւր
Տիգրան հօրը պէս զարմանալի քաջութիւններ անե-
լով՝ վրան շատ երգեր յօրինեցին, և Վացիք նորա
արձանը կանգնելով՝ աստուծոյ տեղ պաշտեցին. իսկ
Վան այսու միայն անուանի եղաւ, որ Շամբրամակէրտ
քաղաքը նորոգելով՝ Վան անուանեց:

Հայկազնաց թագաւորութիւնն յիտոյ կառա-
վարեցին մեր Հայաստան աշխարհը Մակեդոնացոց
կամ Եսորւց թագաւորներէն յուղարկուած իշխան-
ները, որք կուսակալ կառուէին (325—149): Ո՞քա
ութը հատ եղան, որք իւրեանց կուսակալութեան
միջոցին, այսինքն 177 տարուան մէջ վասներէ զատ
օգուտ չուուին Հայոց:

Հայկազնաց տէրութիւնը 1749 տարի քշեց, 59
տիրապետք և 8 կուսակալներ ունեցաւ ու Քրիս-
տոսէ 150 տարի յառաջ վերջացաւ:



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՔԱԴԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ


С Е С Т В А Н И Й 8

ԴԱՍ Ժ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Արշակունեաց թագաւորութիւնը
Եղլահ անունով Պարթև թա-
գաւորէն սկսաւ, որ Սելևկիաց-
ւոց կամ Կոորեստանեայց յաղթեց, և
Պարթևաց թագաւորութեան սահման-
ները հետզհետէ ընդարձակելով՝ եկաւ
Հայաստանի ևս տիրեց, երկրին բնակ-
չաց վերայ իւր Աղլաւահ եղբայրը թա-
գաւոր դրաւ (Քրիստոսէ 149 տարի
յառաջ), որով Եղլահունէաց թագաւո-
րութիւնն սկսաւ:

Արշակայ պատուերին համաձայն՝
պատերազմի ելաւ Հայաստանի հիւսի-
սային-արևմտեան կողմն եղած ազգաց
դէմ, և յաղթութեամբ դառնալէն վեր-
ջը Մ'ծբին քաղաքի մէջ դրաւ աթոռը,
որ Ասորւոց երկրին ու Հայաստանի մէջ-
տեղերը կընկնի! Վաղարշակ այն պա-
րազմին մէջ Հայոց քաջութիւնն ու
տիրասիրութիւնը տեսնելով՝ իրեն ազ-
նիւ բարբովը՝ բնական հետաքրքրու-
թիւն ունեցաւ նոցանախնեաց պատ-
մութիւնը կարդալ և իմանալ. բայց
Հայաստանի մէջ չգտնելով այն պատմու-
թիւնը, Մ'ար Աբաս Աստիւա անունով ա-
սորի ուսումնականը յուղարկեց Երինուէ,
ուր Վաղարշակայ Եղեօր՝ մեծին Արշա-
կայ հրամանաւը՝ գնաց Մար Արաս տեղ-
ոյն թագաւորական գրատան մէջէն
մեր ազգի պատմութիւնը քաղեց ու



ՎԱՂԱՐՇԱԿ - ՕՐԵՆՍԴԻՐ ՀԱՅՈՑ.

Հայաստան բերաւ։ Ուստի և Աղարշակ մեր ազգի ծաղմանն ու որպիսութեամը վերայ ստուգութեամը տեղեկանալէն վերջը՝ հետագայ բարեկարգութիւններն արաւ.

Ե, Հայաստանի այլեայլ սահմաններու և քաղաքաց մէջ հոսակալ, դատավոր, էքտառարար և գլուխէլ նշանակեց.

Ի, Դատավոր իշխանին Երշակունիթագաւորաց թագաղիր կարգեց.

Գ, Գանձնակալ իշխանին հանդերձապետ նշանակեց.

Դ, Խոռիսուունեաց տոհմէն սպառագէն թիկնապահներ յօրինեց.

Ե, Դատ իշխանին արքունի որսորդ կարգեց.

Զ, Որսի ժամանակ իւր առջեւն արծուէկիրք կամ արծիւ տանողներ նշանակեց՝ որոց տոհմը Եղեռննիւ կոչուեցան.

Է, Որսորդաց վերայ վերակացուք
սահմանեց, որք որսացուած բազէներն
ու հաւերն ընդունելով՝ Հանունի+ կո-
չուեցան:

Ը, Գինիներուն վրայ Գն անունով իշ-
խանը մասնաւոր տակառապետն շանա-
կեց, որոյ ցեղը Գնունի ասուեցաւ.

Թ, Տիգրանուհւոյ ազատ ցեղէն ար-
քունի դրան պահանորդաց վերայ չորս
սպառազէն անձինք որոշեց.

Ժ, Եւր երկրորդը սահմանեց լինել
Մարաց Աժդահակ թագաւորի ցեղէն
մէկը, որով Մարտացան, այսինքն Մարտա-
ցէր կամ Վէլապաղուն+ կոչուած ցեղն
որոշուեցաւ:

Իաց յայսցանէ իւր թագաւորութիւնը
Ճշմարտութեամբ և արդարութեամբ զօ-
րացընելու համար երկու անձինք ընտ-
րեց, յորոց մէկուն իշխանութիւն


տուաւ որ երբ ինքը (Վաղարշակ) ա-
նիրաւ գատաստան կամ արդարութեան
դէմ ո՛ր և իցէ հրաման հանէ՝ իսկոյն
իմացընէ թագաւորին տուած հրամանին
ծոռութիւնը. իսկ միւսին իրաւունք տը-
ւաւ, որ տէրութեան մէջ գտնուած չա-
րագործները պատժելու մասին՝ թագա-
ւորին անհոգ եղած ժամանակ՝ պար-
տաւորուած լինի իւր միտքը ձգելու:
Եւլեւ իւր որդւոց մէջէն միայն անդրա-
նիկ կամ առ ջինեկը պահեց արքունեաց
մէջ. իսկ մնացածները Հաշտենից գա-
ւառն յուղարկեց:

Վաղարշակ քսաներկու տարի թա-
գաւորեց, տէրութեան կառավարու-
թիւնը իւր Եւլաւ որդւոյն յանձնեց և
Մծրին քաղաքին մէջ իւր բազմարդիւն
կեանքը իսաղաղութեամբ կնքեց:

Արշակ առաջինը իւր Վաղարշակ
հօր խելացի կառավարութեանը հե-
տևելով՝ տէրութիւնը առաւել ևս բա-
րեկարգեց. Առվկաս լեռան կողմերէն
Հայաստան գաղթող Բուլղարները՝ մեծ
ինամբով ընդունեց ու Տասեն գաւա-
ռին մէջ բնակեցուց, որով նոցա Աւետ
իշխանին անունէն, բոլոր գաւառը Կա-
նանդա ասուեցաւ: Յետոյ Հայոց տէրու-
թէնէն ապստամբած պօնտացիներուն
դէմ պատերազմեցաւ: և քաջութեամբ
հնագանդեցընելէն վերջը՝ Աւ ծովուն
եզերաց վերայ մէկ կոթող տնկեց՝ իւր
յաղթութեանը նշան. և տասներեք տաշ-
ըի թագաւորելէն վերջը մեռաւ:

Երշակայ տեղն անցաւ իւր որդին,
Ելքանէ առաջին, որ բնութեամբ կտրիճ,

ԱՐԱՏԵՍԻ Ա. ՑԱՂՔԻ ԱՐԴՅՈՒՆ ԹԱԳԱԽԵՐԻՆ ՊԵՐԱՐԱ



պատերազմող ուսաշխարհակալութիւն
սիրող լինելով՝ զունաստանիւ և քոլոր
Փռքը Ասիոյ տիրեց։ Մինչեւ Երտաշեսի
օրերը՝ Պարսից թագաւորները աթոռով,
պատռով ու մեծութեամբ պատշաճ կհա-
մարուէին, և Հայոցը՝ Երևան, բայց Եր-
տաշես Պարսկականանի մէկ մասին, տի-
րելով՝ նոցա Արշակուն թագաւորնիւր երկ-
րորդն արաւ, իւր անունովն ու պատ-
կերովը ստակ կոխել տուաւ Պարսկաս-
տանիւմ մէջ և իւր ազգունիքը շինեց
այնտեղ։ Տէ՛ւ անունով որդին՝ Վահագ-
կոչուած իշխանին յանձնեց, որ պատե-
րազմական կրթութեանց վարժեցընէ
զինքը. իսկ Երտաշայ աղջիկը՝ Ուհարդա-
տայ հետ կարգեց, որ Պարսից Դարեհ
թագաւորին ախարարաց ցեղէն երաւ
Վարաց բդեաշխ (էալայ), և որուն քոլոր
Պատոսի բնակչաց վերայ կուսակալ դրաւ։

— Խորենացինակասէ թէ Արտաշէս
արևելքէն ու արևմուտքէն այնչափ զօրք
ժողովեց, որոց և ոչ թիւր գիտէր.
ուստի Երբ Արտաշեսի հրամայած ժա-
մանակ այսպիսի բազմութեամբ մէկմէկ
քար ձրգէին զինուորները՝ բլուր կձեւա-
նար, և Երբ ամենքը միասին նետ նե-
տէին՝ արևը խափանուելով՝ բոլոր գե-
տինը շուք կլինէր: զայ արդոյ
Արտաշեսի այդչափ զօրք ժողովելուն
պատճառն էր նորա աշխարհակալու-
թեան հոգին. վասն զի այն անհամար
զօրացը գլուխ կեցած զնաց բազմու-
թեամբ բոլոր Յունաստանի տիրեց,
որով շրջակայ ազգաց սիրու մեծ վախ
ձգեց: Յետոյ Միջերկրական ծովուն մէջ
շատ նաւերով կղղիներու տիրեց, և մեծ
փառքով ու պատուով Հայաստան դար-
ձաւ: հետո բերելով Յունաստանի մէջ


դտած Արտեմի, Աւրան և Սորոն կուռքերուն
պղնձէ արձանները, որ իւրեանց քուր-
մերուն հետ մէկտեղ Արմաւիր յուղար-
կեց: Յաւալին այս է՝ որ այսպիսի քաջ
ու աշխարհակալ թագաւորի վերջը շատ
խղճալի եղաւ. վասն զի քսանհինգ տա-
րի թագաւորելէն յետոյ՝ յայտնի չէ
թէ ի՞նչ պատճառաւ նորա զօրաց մէջ
խովութիւն ընկնելով՝ Երբ մինչ իմահ
վերաւորեցին զինքը, նա իւր հրացայտ
աչքերը գէպի վեր բարձրացուց և „Ա-
ւաղ փառացս անցաւորի“ ասելով՝ հո-
գին փչեց, որով իւր մշտայաղթ զէն-
քովը վաստակած փառքէն աւելի՝ ան-
մահական եղաւ իրեն վերջին անմահ
խօսքով: սինայ ու ամսացորան
մամ լամազրիշ մզլու զմաշարա զուան
աբասսով մաղրիշ և զիմուռայրա/
ազու յանց սամի

ԹԱՍ ԺԲ.

Տէ՛ւրան էւհւրր և նորա ժաջու-նէննէւը .

Արտաշեսի տեղն անցաւ իւր որդին
Տէ՛ւրան երկրորդ , որ Հօրը մահուան պատշ-
ճառաւ ապստամբած Յոյները , իւր քե-
ռայր Միհրդատայ հետ միացած՝ վերը-
տին նուածեց , Ասորւոց երկրին տիրեց
և նոցա Ուլիչէ թագուհին սպաննեց .
վասն զի Սաորիները կը գրգռէր որ Տիգ-
րաննէն ապստամբին : Ճրեայք Աիլիննէի
սպանուիլը լսելով՝ վախցան որ Տիգրան
Ճրէաստան ևս երթայ պատերազմելու .
ուստի դեսպան յուղարկելով՝ շատ ըն-
ծաներ տուին Տիգրանայ որ գթայ իւր-
եանց և չարիք չանէ Ճրէից և նոցա
թագուհոյն : Այս բանիս համար մաս-
նաւոր աղաչանք արին Տիգրանայ նաև
Ռագրատունիր , և Տիգրան իսոստացաւ
վնաս չտալ նոցա :

ՅԱՂԹԱՆԱԿ ՏԻԳՐԱՆԱՑ ՈՐԴԻՈՅ ԱՐՄԱՆԵՒՄ.



Այդ միջոցները Հռովմայեցիք թըլչ
նամացան Միհրդառայ հետ, վասն զի
Միհրդատ Կապաղովկիոյ իշխելէն վերջը՝
Հռովմայեցւոց տէրութենէն կարգուած
Երիոբարզան թագաւորը Կապաղովկի-
այէն հալածեց, և իւր Եւրոպան որդին
թագաւոր դրաւ նորա տեղը։ Եյս բա-
նիս համար Կապաղովկացիք Հռովմա-
յեցւոց ապաւինեցան, և նոքա Սէլլա ա-
նունով քաջ զօրապետը յուղարկեցին,
որ Կապաղովկիա համնելուն պէս՝ Երի-
արաթն ու սորա Գորդէսս զօրապետը
փախուց և Երիոբարզանը նորէն թա-
գաւորեցուց։ Եյնուհետև Միհրդատ
Տիգրանայ օդնութեամբը Հռովմայեցւոց
դէմ շատ անզամ պատճրազմ անելով՝
երբեմն յաղթեց՝ երբեմն յաղթուեցաւ.
բայց երբ նորա Փառանակէն անունով փա-
ռամու ու ինքնահաւան որդին՝ Միհրդ-

դատայ Առարտի զօրապետին հետ ապըստամբելով Հռովմայեցւոց կողմն անցաւ, Միջրդատ բերդին մէջ անօգնական մընալով՝ ինքզինքն սպաննեց:

Հռովմայեցիներէն վրէժն առնելու համար քիչ ժամանակէն Տիգրան զնաց Միջագետաց նորէն տիրեց ու Գառնիան զօրապետը Եղիպտոս փախուց. բայց տեսնելով որ Հռովմայեցիք դարձեալ Եսորւոց ու Միջագետաց տիրելով իւր վերան կուգան և ինքը չկրնար ծերութեանը պատճառաւ դիմազրել նոցա, նախագահութեան պատիւը Պարսից Երշէզ թագաւորին տուաւ, յորմէ օդնութիւն առնելով՝ Հռովմայեցւոց զօրքը ցրուեց և նոցա Արտակար զօրապետն սպաննեց:

Տիգրանայ ծերութեան պատճառաւ Հայոց սպարապետ կարգուեցաւ Ոշտունեաց Բարդութեան անունով քաջ նախա-

րարը, որ Հայոց ԱՊարսից բանակը հեռատետութեամբ կարգաւորելով՝ բոլոր Եսորւոց երկրին տիրեց: Յետոյ Հրէաստան գնաց Ծարզափրան Ենտիգոնոսին հրաւիրանօքը, և նորա խոստացած պարզեցին համար՝ նախ Հրէաստանի Հիւրկանոս թագաւորը մեծամեծ դաշինքներով կանչեց ու խարդախութեամբ բռնեց որ Ենտիգոնոս կարողանայ թագաւորել, յետոյ Հիւրկանոսի կայքը յափշտակեց, զակը անունով քաջ զօրավարը շատ զօրաց հետ մէկտեղ Երուսաղէմ թողուց, և Հերէննու թագաւորն ու բազմաթիւ Հրէաներ գերի առած Հայաստան դարձաւ:

Եյսպէս ահա Տիգրան յիսունուչորտ տարի թագաւորեց, 85 տարեկան հասակին՝ թագաւորութիւնն իւր Երշէզ որդւոյն յանձնեց և Քրիստոսէ 35 տարի յառաջ մեռաւ:

ԴԱՍ ԺԴ.

Երտաւազդ առաջինը, որ իւր Տիգրան
Հօրը պէս քաջ, խելացի ու միան-
գամայն ուսումնական թագաւոր էր
շատ ինամքով կառավարեց մեր ազգը:
Բայց որովհետև Երուսաղեմի առումը
չուզմայեցւոց սրտին սաստիկ ցաւ դար-
ձած էր, նոցա Ենտոնինոս զօրապետը
պատերազմի ելաւ չայոց դէմ: Կոհին
սկսելէն յետոյ տեսաւ Ենտոնինոս, որ
իւր տկար զէնքովը չպիտի կարողանայ
Երտաւազդին յաղթել, աղաչանքով ու
երդմունքով: Իւր մօտ հրաւիրեց, և
խոստմանը հակառակ՝ Պարսից թագա-
ւորին օգնելու համար՝ շղթայի զարկած
Եզիպտոս տարաւ: Երտաւազդի գերու-
թիւնը մեծ ցաւ պատճառեց չայոց,
որը շուտով Երա՞ անունով խելացի անձը

թագաւորեցուցին, որ Տիգրանայ եղբօր-
որդին էր: Այս տեսնելով որ բաւական
պատրաստութիւն չունի չուզմայեցւոց
դէմ ենելու, միտքը դրաւ որ առ ժա-
մանակ հաշտութիւն իտուի: Բայց երբ
չայերը չյօժարացան, չուզմայեցւոց
դէմ պատերազմի ելաւ, յորում շատ
քաջութիւններէն վերջը՝ Ենտոնինոսէն
յաղթուեցաւ ու Պարսկաստան փախաւ:
Եյս եղաւ պատճառ որ Ենտոնինոս չա-
յաստանի տիրեց և երեք մասնի վերայ
բաժանեց, այսինքն Ստորին չայաստանի
վերայ՝ իւր Աղեքսանդր որդին թագա-
ւորեցուց, Աերին չայաստանը՝ Անրաց
թագաւորին յանձնեց և Փոքր չայաս-
տանը՝ Պոնտոսի Պոլեմոն թագաւորին
տուաւ: Խոյսնայնան մայստերի նույն
արք Զնայելով այս նոր կարգադրութիւն-
ներին՝ չուզմայեցիք երեք տարւոյ չափ

միայն տիրեցին Հայաստանի. վասն զի
Երշամ Պարսից օգնութեամբը նախ՝
Մարաց դէմ պատերազմեցաւ ու Աւել-
րին Հայաստանը նուածեց, և ապա
զոռվմայեցիքը Ատորին և Փոքր Հայ-
աստանէն քշելով՝ մինչեւ Կեսարիա տի-
րեց. որով Աւերին Հայաստանը Պար-
սից ձեռքն անցաւ, և Ատորին ու
Փոքր Հայաստանը՝ Երշամայ: Աւեր-
ջիսս Երտաւազդայ Երկու որդիքը գե-
րութենէ ազատելու համար հարկատո-
եղաւ չոռվմայեցւոց, և այս բանիս հա-
մար դեսպան յուղարկեց ի չոռվմ, և
խոստացաւ տարուէ տարի հարկ տալ (Օ-
գոստոս կայսեր: Եյդ միջոցները Աւերին
Հայաստանի ժողովուրդը Պարսից բըռ-
նութիւններէն ձանձրանալով՝ նոյնպէս
Օգոստոս կայսեր դիմեց, և սա նոցա
ինդրանացը զիջաննելով՝ Երտաւազդայ

որդի Տիգրանը թագաւորեցուց, որ Փառ-
Տէ՛ր ասուեցաւ: Եյս Աւերին Հայաս-
տանի թագաւորութիւնը 59 տարի տե-
ւեց, յետ որոյ Երշաման Երկրորդը Ատորին
Հայոց թագաւորութեանը հետ միացուց:
Խոկ Երշամ՝ իւր ժամանակի պահանջ-
մունքին համեմատ զանազան բարեկար-
գութիւններ անելով՝ մէկ նոր քաղաք
շինեց Երշաման անունով. և քսանինը
ատրի թագաւորելէն յետոյ տէրութիւնը
իւր Եբէտը որդւոյն թողլով՝ մեռաւ:

Եբէտը և նորոյ գործերը պահանջան դայ
լողի ցիկլ դաստիարակութեան ան-
դա մնանալու համար գործերը:

Եբէտը և նորոյ գործերը:

Երգար անուանի եղաւ իւր իմաս-
տուն կառավարութեամբն ու հեղ բնա-
ւորութեամբը, որով Ետք այլ անուանե-
ցաւ մեր ազգէն, բայց Յոյներն ու Ատո-
րիները ուղիղ հնչել չկարողանալով՝ Ե-

բագար կասէին, ուսկից սովորութիւն
եղաւ Ծրգար ասելու: Սորա թագաւու-
րութիւնը նշանաւոր է մեր պատմու-
թեան մէջ Քրիստոսի Տեառն մերոյ
Հրէաստանի Տեթևէմք քաղաքին մէջ
ծնանելովը ուստի և կարժէ այս թա-
գաւորին վերայ քիչ մի ընդարձակ խօսել:
Քրիստոսի ծնուելէն յետոյ Հռով-
մայեցւոց Օգոստոս կայսրը հրաման ա-
րաւ իւր բոլոր տէրութեան մէջ թէ բը-
նակչաց թիւը զրել և թէ միանգամայն
իւր արձանը կանգնել բոլոր մեհեաննե-
րու մէջ: Հերովդէս, որ Հրէից վերայ
կթագաւորէր, ուզեց որ իւր արձանն ալ
մէկտեղ զրուի Հայոց սահմանների մէջ,
բայց Երբ Ծրգարի յանձն չառնելուն
պատճառաւ՝ Հերովդէսի եղորորդին
պատերազմի ելաւ, Ծրգար յաղթեց նո-
րան և նորա զօրաց մեծ մասը կոտորեց:

Հերովդէսի կուսակիցները Երբ տե-
սան որ պատերազմով չկարողացան յաղ-
թել Ծրգարին, սկսան այլևայլ ամքաս-
տանութիւններ անել վրան, որ Օգոս-
տոսի աչքէն հանեն, բայց Ծրգար ինք-
նինքը արդարացընելու համար Հռովմ-
գնաց, և իւր խոհական վարմունքովը
ոչ միայն առաւել ևս սիրելի եղաւ Օ-
գոստոս կայսեր, այլ և մեծ պատուով
Հայաստան վերագարձաւ: այս այսմզըն
Ոինչդեռ Ծրգար այս եղելութեան
վերայ ուրախացած Հայաստանի բարե-
կարգութեանը կաշխատէր, յանկարծ
լուր ստացաւ որ Օգոստոս կայսրը մե-
ռաւ և նորա Տիբերիոս որդեգիրը թա-
գաւորեց: Եյս պատճառաւ Ծրգար
խնդակցութեան դեսպան յուղարկեց
Հռովմ: բայց Տիբերիոս փոխանակ դես-
պանները պատուելու՝ պատժեց, որով

Երգար սաստիկ բարկացած՝ չոռվմայ-
եցիներէն ապօտամբիլ մտածեց. ուստի
և աթոռը Եղեսիա փոխադրելով՝ քա-
ղաքին բաց տեղերն ամրցուց ու պա-
տերազմի պատրաստուեցաւ:

Երգարուս այս դիտաւորութեանը
թէև արգելք եղաւ Պարսից Երշաւիր
թագաւորին մահը, (որոյ տղոց մէջ
խռովութիւն ընկնելով՝ զիրենք հաշ-
տեցընելու համար Պարտկաստան գնաց),
բայց Երաբացւոց Երես թագաւորին
օգնելու խօսք տուաւ, որով Ներովդէս
չորրորդապետը յաղթուեցաւ: Զնայելով
այս ամեն յաջողութեանց վերայ՝ Պարս-
կաստանի մէջ այնպիսի սաստիկ բորո-
տութիւն ստացաւ Երգար, որ բժշկ-
ները չկարողացան առողջացընել զինքը,
որով ամեն տեսակ մարդկային հնարքնե-
րէ յոյար կտրեց. բայց լսելով՝ Քրիստոսի

հրաշքները, դեսպան յուղարկեց իրեն՝
աղաչելով որպայ զինքը բժշկէ: Խոկ
Քրիստոսի հետ ծանօթանալը՝ իւրեւ-
րուսաղէմ յուղարկած հայ դեսպանաց
պատմելովն եղաւ, որ Ներովդէսի Եր-
գարու վերայ արած ամրաստանութեանց
պատճառաւ՝ Երուսաղէմ բնակող Նե-
րովմայեցւոց Ապօինոս զօրապետին յու-
ղարկուած էին Երգարու կողմէն, որ
Երգարը արդարացընէն: Եօյն դեսպան-
ները Ներովդէսի մէջ Քրիստոսի ա-
րած հրաշագործութիւնները տեսնելով՝
Եկին պատմեցին Երգարու, որով իս-
կոյն հաւատաց Քրիստոսի աստուածու-
թեանը, ասելով թէ՝ „Եօյն Քրիստոս ա-
ստուած հրաշագործանձը՝ կամ երկնքէն
իջած Աստուած է, և կամ Եստուծոյ
որդի. վասն զի չկայ աշխարհիս մէջ
այնպիսի մէկը՝ որ մոռածները կենդա-
նացընել կարտղանայ“:

Եյսէտետեւ Երգար բոլոր յօյսը
Քրիստոսի զերմարդկային կարողու-
թեան վերայ դնելով՝ թուղթ զրեց և
իւր Անանէ սուրհանդակին ձեռքով առ
Քրիստոս յուղարկեց՝ հետագայ խօս-
քերով.

„Երգար Երշամի որդի՝ աշխարհի իշխան,
Փրկիչ ու Տարերար Յիսուսիդ, որ Խրուսաղեմի
մէջ երկացար, Ողջոյն..”

„Քո անունն ու առանց դեղի արած բժշկու-
թիւններդ լսեցի, վասն զի, կատեն, դու կոյլերուն
աչքը կրանաս, կաղերը կբալթըննս, բորոտների կը
սրբս, սատանանները կհալածես և երկար ժամանակ
հիւանդութիւն ունեցողները կառողջացըննս. որպէս
նաև մեռելներ կկենդանացըննս: Խրո այս բաներս
լսեցի, միտքս դրի որ դուն՝ կամ Սստուած ես եր-
կինքէն իջած և կամ Սստուծոյ Որդի, այս պատ-
ճառաւ նամակս գրելով՝ կաղածեմ որ զաս և հիւ-
անդութիւնս բժշկես: Լսեցի նաև որ հրեաները
կուզեն քեզի չարչարել ու մեռցընել. արի ինձ
մօտ, ես թէև փոքրիկ՝ բայց զեղեցիկ քաղաք մի
ունիմ, որ երկուսիս ալ բաւական է“:

Դեսպանին հետ մէկ պատկերահան
ալ յուղարկեց Յովհաննէս անսւնով,
պատուիրելով՝ որ եթէ Քրիստոս չգայ՝
նրա դէմքն օրինակէ ու բերէ: այսպիսէ

Դեսպանները տեղ համան այն օրը՝
յորում Քրիստոս յաղթանակով Խրու-
սաղէմ կը մտնէր. ուստի և Փիլիպպոս
առաքելայն մօտենալով՝ ինդրեցին որ
Քրիստոսի հետ տեսնուին:

Քրիստոսի հանդիսաւոր տեղ մի
կանգնած միջոցին՝ Յովհաննէս պատ-
կերահանը մէկ բարձր տեղի վերայ ելած՝
կաշխատէր Քրիստոսի դէմքն օրինակէ-
լու. բայց երբ երկար ժամանակ գծա-
գրելէն վերջը չկարողացաւ օրինակել,
Քրիստոս կանչեց զինքն ու ձեռքը դաս-
տառակ կամ մաքուր կտաւ առած եւ-
րեսին վերայ ըռնեց և մէկն տպաւու-
րեցաւ իւր աստուածային դէմքը: Այս

նղանոկերն էս ահա որ՝ գմանդաւակն կամ
Անյեւագործ պատկեր Փրկչն կատուի, որուն
Երգար խոնարհութեամբ և հաւատով
երկրպագելէս վերջը՝ հրամայեց մեծ ըզ-
դուշութեամբ պահել:

Դեսպանաց Քրիստոսի Հետ տես-
նուելէս վերջը Երգարու հաւատոյն վե-
րայ մեծ ուրախութիւն ցուցուց Քրիս-
տոս, և իւր զրաւոր պատասխանն
թուվմաս առաքելոյն ձեռքով այսպէս
կը հրել հրամայեց.

”Երանի նորան որ դեռ չտեսած՝ կհաւատայ
ինձ. վասն զի ինձ համար զրուած է թէ տես-
նողները չպիտի հաւատան. և չտեսնողները պիտի
հաւատան ու փրկուին. իսկ ինչ որ կվերաբերի իմ
քեզի գալու մասին, պէտք է ինչ զործի համար
որ այստեղ զրկուած եմ, այն կատարեմ ու վերջը
ինձի զրկուածին մօտ համբառնամ։ Համբառնալէս
յետոյ քեզի աշակերտներէս մէկը կուղարկեմ, որ
քու ցաւելոդ բժշկէ ու միանգամայն քեզ ու հը-
պատակներուդ կւանչ պարզեէ”։

Դեսպանները մեծ ուրախութեամբ
վերագարձան իւ Հայաստան, ուր թա-
գաւորին Տետ անհամբերութեամբ կը-
սպասէին խոստացուած առաքելոյն գա-
լրատեանը, ուր Քիչ ժամանակէն եկաւ,
և էր մատուցու առաքեալը։ Այս երբ իւր
ձեսքն Երգարու վերայ տրաւ, իսկոյն
թագաւորին բարոտութիւնը սրբեցաւ.
յետոյ մկրտեց զիմագաւորն ու բոլոր
Եղեսիացիքը, և իւր տեղը եպիսկոպոս
գնելով թագաւորի Առաք անունով խոյ-
րարար կամ թագ կարողը, ինքը գնաց
որ Հայաստանի միւս տեղերն ետքա-
րողէ քրիստոնէական հաւատքը։

Ճաշկուելէս վերջը Երգար երեք
տարի ևս իբրև առաջին քրիստոնէայ
թագաւոր ապրելով՝ Հռովմայեցւոց Տի-
բերիոս կայսեր, և Պարսից ու Ծարլոց
թագաւորներուն մէկմէկ թուղթ գրեց,

որոց մէջ քրիստոսի աստուածութիւնը
ցուցուց. և ընդ ամենայն 38 տարի
թաղաւորելէն յետոյ սրբութեամբ մե-
ռաւ ու Եղեսիոյ մէջ թաղուեցաւ ար-
քապէս ահա մեր Երգար թաղա-
ւորն այնպիսի անուն ու յիշատակ թու-
ղուց, որ միշտ կարող եմք պարծենալ
մեր առաջին քրիստոնեայ ազգինելուն
վերայ: Երգարու հեղութիւնը, իոհէւ,
մութիւնն ու պարկեշտ վարքը իւր պատ-
մութենէն յայտնապէտ կերեի, ուստի
և ամեն պատմիչ դինքն առաքինի թա-
գաւորաց կարգը դասածէ: Ասաւած զո-
ւուած զարդ գույն գույն գույն գույն գույն

ԳԱՍ ԹԵ.

Անանէն ՁՆՀ Երգարու էրւուրու:

Երգարէն յետոյ Հայոց թաղաւո-
րութիւնը երկու ճիւղի վերայ բաժան-
ւելով՝ մեծ խոռվութիւն ընկաւ ազգին

մէջ վասն զի Երգարու որդիին Անանէ-
Եղեսիոյ մէջ թաղաւորեց ու դարձեալ
կուազաշտութիւն սկսաւ իսկ Ոանուարուն
Եգրարու քեռորդին՝ Շաւարշանի մէջ
թաղաւորեց և կուզէր բոլոր Հայոց
վերայ տիրել: Ազգարազ մասսի բար
Եյդ ժամանակները Անանէ Եղեւ
սիոյ արքունի պալատը նորոգել տարու
ժամանակ՝ երբ շինութեան վարը կանգ-
նած՝ հրաման կանէր կճեայ սիւն մի
կանգնեցընել, յանկարծ սիւնը վերան
ընկաւ ու սպաննեց զինքը. որով Աա-
նատրուկ յարմար միջոց գտնելով՝ զօրք-
ժողովեց ու Եղեսիոյ վերայ գնաց: Ե-
ղեսիացիք որ ըստ մեծի մասին քրիս-
տոնեայ էին, դեսպան յուզարկեցին առ
Սանատրուկ առելով՝ որ սիրով կընդու-
նին զինքը եթէ իւրեանց քրիստոնէա-
կան հաւատքին չդիպչի: Ամսատրուկ

Երդմամբ կոստացաւ՝ բայց քաղաքին
տիրելին վերջը խրակրումը ստելով՝
Երգարու արու զաւակներն սպաննել
տուաւ, աղջկունքը չաշունից գտապն
յաւզարկեց և չեղինէ կինը՝ Ափագեց
տաց խառան քաղաքը։ Յետոյ Շաւար
շանի մէջ Թագէռաւ և Տարթողիմէսս
առաքեալները նահատակեց, սրակէս նաև
խրամանդուինա աղջիկն ու Երգուհի
քոյրը։ Ա լաձի զվարյ մանաց՝ ծառ
մաս Սանատրուկ թագաւորի երևելի գոր
ծըն Եղաւ իւր թագաւորանիստ քաղա
քը, որ երկրաշարժէ աւրուած էր, շատ
գեղեցիկ կերպով նորոգել, քաղաքին
մէջտեղը իւր արձանը կանգնել և ար
ձանին ձեռքը մէկ դրամ դնել, իմա
ցընել ուղելով ժողովրդեան՝ թէ քա
զաքի նորոգման պատճառաւ իւր (Սաւ
նատրուկի) բոլոր գանձն սպառեցաւ և

հայ Ան։ Այս մնաց մին խօսքէն առած
է, կառեն, քաղաքն իւր Ուժին անունը
ու Եյսպիսի շինութիւններով Սանա
տրուկ երեսունչորս տարի թագաւորելէն
յետոյ մէկ օր որոի գնացած ժամանակ
նետէ զարնուելով մեռաւ։ Խնչպէս կե
րևի պատմութենէն, Սանատրուկ բնու
թեամբ խորամանկ ու ճարտար եղած
է, որ կրցած է այնչափ տարի թագաւ
որել իւր երդումը ստելէն վերջը։
Սանատրուկի տեղն անցաւ նախա
րարաց հաւանութեամբ Երրունդ Երրուն,
որ թէպէտ թագաւորական ցեղէ չէր,
բայց մօր կողմանէ Երշակունի էր։
Երուանդ իւր թագաւորութիւնն ա
պահովցընելու համար բոլոր Սանատրկոյ
ցեղը մեռցընել տուաւ, յորոց Երտաշէսը
միայն աղատեցաւ Ամբատ հագրատուն
ւոյն ձեռքովը Պարսկաստան փախչելով։


Ուստի և Երուանդ կասկածելով որ Երատաշէս Պարսից օգնութեամբ չայց տէ ըրութիւնն իւր ձեռքէն չյափշտակէ, թագաւորութիւնը զօրացընելու համար՝ Այս ջագետքը չոռվմայեցւոց տուաւ, որով ինքը Աերին և Ստորին չայց վերայ միանգամայն թագաւորեց, և ամուսն Երմաւիր փոխաղբեց. այլև զանազան շինութիւններ արաւ, որոց մէջ երևելին եղաւ Երուանդութիւնը քաղաքը:

Հատ ժամանակ չանցած՝ Երուանդի գուշակութիւնը կատարուեց. վասն զի Երտաշէս՝ Պարսից Դարեհ թագաւորի օգնութեամբը՝ Ամբատ Բագրատունից հետ մէկտեղ Երուանդայ դէմ ելաւ, ու մեծամեծ կոտորած անելին ու Երուանդըն սպաննելին վերջը չայաստանի տիրեց, և Սանատորուկի թագն Երտաշէսի գլուխը դնելով՝ թագաւոր անուանեց ամենայն չայց:

Փաստական անգամ Երուանդը մասնաւում է առաջարկութիւնը. — Ասուր Երտաշէս Երիւրդէն մնաւ Տնտեսաւ և առաջարկութիւնը. — Ալանց պատերազմը. — Սամինիկ թագուհին. — Երտաշէսի թագման ժամանակ ժողովրդոց անձնազուութիւնը. — Սիրաւ Բագրատունուց սպարապետութեւնն հրաժարութիւն. — Երտաշէս Բ. Տիգրան Գ. Վաշինցոնը և նորա քաջութիւնները:

լուն պատճառաւ՝ անձնատուր եղաւ
Յուսուփին, երդմունք առնելով անկից
որ իրեն անձին վսաս չանէ:

Սակայն քիչ ժամանակէն Յուսուփ
իւր երդումը ստելով՝ անտանելի չար-
չարանք տուաւ Ամբատայ Հաւատքէն
իսախտելու մոքով, բայց նա վեհանձնու-
թեամբ ընդդիմանալով՝ 24 տարի թա-
գաւորելէն վերջը՝ 914 թուականին Հա-

ւատոյ և Հայրենեաց Համար սրբու-
թեամբ նահատակուեցաւ Գողթն գա-
ւառի Խրնջակ ամբոցին դիմացը:

Եյս սոսկալի դիպուածէն վերջը Յու-
սուփի իւր քովի ապստամբ Հայ նախա-
րարաց բազմութիւնը տեսնելով՝ վախ-
ցաւ, ու ոչինչ պատճառներով մէկ մասը
յայտնի կերպով սպաննել տուաւ, միւս
մասը խեղդամահ արաւ, և աւելի նշա-
նաւոր մասը թունաւորելով մեռուց,
զօրս Գագիկ Երծրունի, տգէտ ու փա-
ռամու Հակաթոռ թագաւորը տեսնե-
լով՝ զղջացաւ իւր արածներուն վերայ,
և վախնալով որ մէկ օր ինքն ալ այն
նախարարաց սոսկալի վախճանին վե-
ճակուի, յարմար միջոց գտաւ և իւր
Գուրգէն եղօրը հետ Ալասպուրական
աշխարհը փախաւ ²³: Յետ որոյ Յու-

²³ Գաղիկն յետը Ալասպուրական մէջ թագաւորեցին հետզե-
աւ իւր որդին Ալասպ Դերինիկ 16 տարի, յետոյ որդա փոքր եղ-

սուփամենայն կողմանէ միամտելով՝
Պարսիկ պահապաններ թողոց չայը
աստանի մէջ, և ինքը բաղմաթիւ գեւ
րիներով Պարսկաստան դարձաւ:

ասխատ այս պատասխան միոց դոյ փառ
սխախ Խոյմանան ցմայ նշաներաց ըաղայ
զան իմն խոյմ քան բայ չայը ու այս
սրբն ։ Եւսուն եւսուն և Երան ։ Ժմանակ
այս մեծաւ ա այս չանառնայ զան

Սմբատ առաջնոյն յաջորդեց իւր
որդի Եշոտը, որ իւր հօր սոսկալի մահը
լսելով՝ իսկոյն վեց հարիւր մարդով Յու-
սուփի թողոցած պահապան զօրաց
դէմ ելաւ, ու սաստիկ կոստրած անե-
լով՝ չայաստանէն հալածեց. այլ և
զանազան տեղեր մեծ ջարդ տալով

բայրը Համազատպ Ապուստուն 19. տարի. Համազատպին յաջորդեցն եր
երեք տղամբը՝ Ելոս, Գուրգէն և Սենեքորիմ. Վերջինս սկիմացոց
բանութիւններէն աղաստուելու համար՝ 1021-ին Ապակուրականը Յուսուց
տուաւ և տեղը Սերաստիո գտաւան առաւ Յոնիրէն. Սերաստիո մէջ
Սենեքորիմին յաջորդեցն Առաջմ. և Արուսահւ, որոց մահուանէն յետոյ
1080-ին բոլորովին վերջացաւ. Արծրունեաց թագաւորութիւնը.

թշնամեաց սիրտը վախ ձգեց և այս
քաջութիւններուն համար Եւսուն եւսուն
ասուեցաւ. վժդարայ, զմանց խմաննա
չայք Եշոտոյ քաջութիւնները տես-
նելով՝ այլ կողմերէ եկին քրովը
ժողովեցան, և 915-ին իւր հօր տեղը
թագաւորեցուցին. բայց մեղք որ քիչ
ժամանակէն չայաստանի խաղաղու-
թիւնը վրդովելով՝ նախարարներէն ո-
մանք դարձեալ սկսան մէկմէկու հետ
կուլիւ, ու մինչև թագաւորին դէմ
Ելնելով՝ պատերազմիւ, որով Յուսուփի
զօրացաւ և չայաստանի վերայ վազե-
լով՝ մեծ արիւնհեղութիւններ արաւ:

Չայաստանն այն թշուառութեանց
ժամանակ Յունաց Կոստանդին Պեր-
փեռուժէն կայսրը չայերուն օգնել ու-
ղելով, իւր կամքը թղթմով խմացուց
Յուհաննէս կամ թողիկոսին, յորմէ պա-

տասխան առնելով՝ կայսրը դժացաւ
Հայոց վերայ, և իսկոյն թահողորոս
անունով իշխանը յուղարկեց ի Հայաս-
տան, որ Եկաւ թագաւորն ու կաթո-
ղիկոսը Կոստանդնուպոլիս հրաւիրեց:
Գնաց Աշոտ քանի մի նախարարաց
հետ և մեծ սիրով ընդունուեցաւ կայս-
րէն, ու քիչ ժամանակէն մեծամեծ
պարզեներով ու շատ զօրքով Հայաս-
տան դարձաւ:

Յաւալին այս է, որ մինչդեռ Աշոտ
Կոստանդնուպոլիս կը գտնուէր, Յու-
սուփի ոստիկանը վախնալով որ Աշոտ
Յունաց օգնութեամբը իրեն չվնասէ,
սուտ բարեկամութիւն ձեացուց, և
Հայոց մէջ Երկպառակութիւն ձգելու
համար Աշոտ Երկաթի հօրեղօր որդին
թագաւորեցուց՝ որ Աշոտ բանակ ասուե-
ցաւ. այս պատճառաւ դարձեալ իտու-

վութիւն ընկնելով Հայոց մէջ, երկու
հօրեղօր որդիք իբրև Երկու օտարա-
ծին թշնամիք սկսան մէկմէկու դէմ
կոռիլ: Պատերազմը սաստկացաւ և
Երկու կողմէն սաստիկ կոտորած եղաւ,
մինչև վերջապէս Յովհաննէս կաթողի-
կոսը մեծ դժուարութեամբ հաշտեցուց
զիրենք:

Այս հաշտութենէն յետոյ Աշոտ
նախ Գուգարացոց դէմ պատերազ-
մեցաւ, — զորս Վասակ և Աշոտ Գրն-
թունի վերակացուներն իւրեանց հետ
միացընելով՝ ապստամբել էին թագա-
ւորէն, — և կրկին նուաճեց զիրենք:
Երկրորդ, Աշոտ ըռնաւորին դէմ, —
որ Աշոտ Երկրորդի Գուգարաց Երկիրն
եղած ժամանակը հաշտութեան պայ-
մանին դէմ՝ զնացել էր Վաղարշապատի
շրջակայքն եղած թագաւորական գիւ-

դերն ու ապարակները իւրեան զրաւել
էր, — և քաջութեամբ յետառառա
անկից: Երրորդ, Ատէացւոց Առվակէս
վերակացուին դէմ, — որ նոյնպէս աշ-
պտամբելէր Աշոտէն, — և զոր բռնեց
Աշոտ, կուրացընելէն վերջը իշխանու-
թենէն զօկեց, և նորա տեղը Վմրամ
իշխանը նշանակեց, որ ուժեղութեանը
համար Յէն կկոչուէր: Չորրորդ, իւր եղ-
բայր Աքասին դէմ, — որ Աշոտ երկ-
րորդի փառացը նախանձելով՝ գնաց իւր
աներոջ (Ափիսաղաց Գուրգէն իշխա-
նին): Հետ միացաւ և կուզէր զԱշոտը
սպաննել որ տեղը թագաւորէ: Աշոտ
իմացաւ իւր եղբօր դաւաճանութիւնը,
շատ զօրքով Ափիսաղաց երկիրը մտաւ,
և մեծ աւերմոնք արաւ, մինչ որ
Ապսակ Աիւնի (Աշոտի հօր քրոջ որդին) իշխանին միջնորդութեամբ պատե-

բազմը դադրեցաւ: Հինգերորդ, Յու
տուփի Բըշը իշխանին դէմ, —որ իմա-
նալով թէ Եշոտ Նըսր ոստիկանի յար-
ձակմունքէն Աւեանայ կղզին փախել է,
զօրք ժողովեց ու Եշոտի վերայ պնաց.
բայց արիասիրտ Եշոտը՝ բանի տեղ չը-
դնելով թշնամեաց բազմութիւնը, 10
նաւով ունի սպառագէն: մարդով այն-
պիսի կոստրած արաւ, որ Բըշը իշխանը
ամօթով յետադարձաւ:
Այս կերպով ահա Եշոտ Բըշին
յաղթելէն վերջը: Երբ տեսաւ որ հետ-
զէտէ խաղաղացաւ Հայաստան, դար-
ձաւ իւր թագաւորութիւնը ճեռք առաւ
ու հաշտութիւն արաւ իւր Եքաս եղբօրը
հետ. բայց մեղք որ այն խաղաղու-
թիւնը չկարողացաւ վայելել, այլ իւր
անդադար պատերազմներուն պատճա-
ռաւ հիւանդացաւ ու 14 տարի թագա-

ւորելէն վերջը մեռաւ։ Եշոտ իւր քաշ
ջութեանցը համար շահնշահ կոչուեցաւ
այլազգիներէն։ զայլ առց յա ի խոյս
Եշոտ առաջնոյն տեղն մանցաւ իւր
եղբայր Եքառ առաջնոյն, որ թագաւորէլուն
պէս աթոռը կարս փոխադրեց և պա-
տերազմները դադրեցընելով ձայաստանը
խաղաղացուց։ Յօրա ժամանակ շատ
տեղեր երևելի շինութիւններ եղան, եւ
կեղեցիներ ու գանքեր առելցան, որոց
մեջ ծաղկեցան Յովհաննէս Ալանական,
Ենանիա փիլիսոփայ, Գրիգոր Նարե-
կացի ու Բարսեղ Շոնանուններով գիտ-
նական վարդապետները արան դայ առն
ձայաստանի այն խաղաղութեան
վրդովողն եղաւ Եմիխազաց Իւր անունով

²⁴ Հաննահ կամ արտօյից արայ կոչուելուն պատճառն այն էր
որ Եշոտ քաջ ու անուանի եր քան թէ Հայոց միւս թագաւորները, այ-
սինքն քան շիտքին Արէցունէ որ (Ա ասպուրականի մէջ կմագաւորէր) և
Աւոր Բառուոր (Դասին քազակի մէջ). այլև քան դվրաց Ավիազաց,
Աշուանից և Եպերացոց թագաւորները։

թագաւորը, որ առանց պատճառի Ե-
բասայ դէմ պատերազմի ելաւ։ Եբա-
զարմանալով մէկէն դեսպան յուղար-
կեց, որ իմանայ պատերազմին պատ-
ճառը. իսկ Իւր ծաղրելով պատասխա-
նեց թէ „կարսի նորաշէն եկեղեցիդ
կուղեմ Արաց ծիսով օրհնել տալ.
վասն զի չեմ ուղեր որ Հայոց արա-
րողութեամբն օրհնուի“։ Եբաս տեսնե-
լով իւր հակառակորդին մոլի եռանդը,
պատշաճ համարեց դարձեալ մարդ
դրկել, որ թագաւորն իւր երկիրը վե-
րադառնայ և ի զուր տեղը երկու կող-
մէն արիւն չթափուի. բայց երբ Եբա-
սայ առաջարկութիւնը արհամարհէլով
Իւր չյօժարացաւ, Եբաս դիմացն ելաւ,
սաստիկ ջարդ տուաւ նորա զօրքին,
և զիւերը բռնեց կարս բերաւ ու ծանր
շղթայի զարկած մայր եկեղեցւոյն դի-

մացը հանելով՝ „Եհա այն հոյակապ
եկեղեցին որ կուզէիր օրհնել Արաց
ծիսով. տես այժմ նորա ժառաւորու-
թիւնը, վասն զի շուտով աչքիդ լոյսը
պիտի պակսեցընեմ“ ասաց, ու իսկոյն
աչքերը հանել հրամայեց, իրրե նորա
մոլեռանդութեանը, մեծամտութեանն
ու պարծենկոտութեանը արժանաւոր
պատիժ:

Խակ Աբաս 24 տարի թագաւորե-
լէն յետոյ խաղաղութեամբ մեռաւ,
որոյ արած գեղեցիկ շինութիւններն ու
բարեկարգութիւնները երկար ժամանակ
յիշատակ մնաց Հայաստանի ամենայն
կողմերը:

Հայով մասնաւոր ու արակածուու ու ուս-
ուածուու առաջ առաջ բայու իշտան
զման ու առաջ սկսու զման զդիր և
այս մասնաւոր ուսուածուու առաջ զմանը

Այսու բայու զմանը զմանը արձակած զմանը
ու ու մզնամ նասկաւու ուսուածու զմանը
Աշու Եղբարէն միւլ թաթարաց աշշաւանուը.
Ա զմանը ու այս ուսուածու զմանը

Արասայ տեղն անցաւ իւր որդին
Աշու երրորդ, որ իւր բարեպատու-
թեանն ու բարեպաշտութեանը համար
Աշու Ողորմած ասուեցաւ: Աորա ժամանակ
Համտուն ամիրան Հագաբացւոց ամի-
րասլետէն ապստամբելով Հայաստանի
վերայ վաղեց բայց Աշու բազմաթիւ
զօրքով զիմացն ենելով՝ զՀամտունն
սպաննեց ու այսպիսի սարսափելի կո-
տորած արաւ, որ նորա զօրքէն հազիւ
քանի մի հոգի վախչելով ազատեցան:

Այս յաղթութենէն յետոյ Աշու ի
սկզբան Ենի բաղաքին ներքին պարիս-
պը շինեց, և ապա եկեղեցիներ ու ամ-
բոցներ հիմնեց: Աշուոյ բարեպաշտու-

թեանը հետևեցաւ իւր Խոստովանոյլ կինը,
որ համեստ բնաւորութեամբն ու ա-
ռաքինի վարքովը ամենուն գթառատ
մայր կհամարուէր։ Սա աղքատաց և
հիւանդաց վերայ ունեցած խնամատա-
րութենէն ի ղատ՝ Սանահնոյ և Հաղ-
բատայ հոչակաւոր վանքերը հիմնեց,
որ մինչև ցայժմ իւրեանց հնութեամբն
ու պատուականութեամբը անուանի են։

Եշոտոյ տեղն անցաւ անդրանիկ որ-
դին Ամբատ Եբէրիչ։ Սա Ենոյ արտաքին
պարիսպը շինեց, որոյ վերայ ութը տա-
րի հաղարաւոր հոգի աշխատեցան։
Պարսպին երկայնութիւնը Եխուրեան
կամ Երփաչայ գետէն սկսեալ մինչև
Շաղկոցաձորը կհամնէր, որոյ վարը
խոր խրամ փորել տուաւ ու քարա-
շէն և աղիւսագործ որմերով պատեց։
Հիմնեց նաև Ենոյ Կաթողիկէ մայր

Եկեղեցին՝ Տէրադ անունով հայ ճարտա-
րապետին ձեռքովը, և 13 տարի ա-
մենայն յաջողութեամբ թագաւորելէն
յետոյ 989-ին մեռաւ։

Ամբատայ ժամանակ ցրուեալ Հայերն
Ենոյ խաղաղութիւնը լսելով՝ եկան
դարձեալ իւրեանց հայրենակցաց հետ
միացան, որով քաղաքին բնակչաց
թիւը մինչև հարիւր հազարի համնելով՝
Ենին զանազան շինութեամբք ճոխա-
ցաւ, որպէս նաև հազար ու մէկ եկե-
ղեցեօք պայծառացաւ, որով սովորու-
թիւն եղաւ ռամկաց մէջ Ենոյ հա-
զար ու մէկ եկեղեցեաց անունովը երդ-
նուլ։

Ամբատայ տեղն անցաւ իւր Եղբայրը
Գառէն առաջն, որ բարեպաշտութեամբն
ու աշխարհաշինութեամբը Իազրատուն-
եաց երևելի ու գովելի թագաւորնե-

րէն մէկն եղաւ։ Սորա կիսը — Կառնութէ թագուհին լմընցուց իւր տագեր՝ (Ոմբատ երկրորդի) հիմնած կաթողիկէ եկեղեցւոյն հոյակապ շէնքը (993). իսկ Գաղիկ Ենույ մէջ նորանոր եկեղեցական և աշխարհական բարեկարգութիւններ անելով՝ իւր հաղատակաց վիճակը բարւոքեց, և 30 տարի թագաւորելէն վերջը՝ 1020 թուականին խաղաղութեամբ մեռաւ։

Գաղիկայ յաջորդն եղաւ իւր անդրանիկ որդին Յոհաննէս առաջն, որ թէն հանդարտ բնաւորութեան տէր ու խեցի մարդ էր, բայց իւր վախետութեամբն ու անդործունէութեամբը մեծ խղճութեան մէջ թողուց զջայատան՝ ոչ միայն իւր կենտրանութեան ժամանակ, այլև մեռնելէն վերջը, ինչպէս որ պիտի տեսնեմք։

Սորա Եշոտ եղբայրը՝ յաղթանդամ ու զօրաւոր մէկը լինելով և իւր Յովհաննէս եղբօր թուլութիւնները տեսնելով, արհամարհեց զինքը և ապրստամբութեամբ ուզեց եղբօրը տեղ թագաւորել։ Եյսնպատակաւ իւր համակամները ժողովելով՝ զնաց Աքապուրականի Աենեքերիմ թագաւորէն օդնական զօրք առաւ ու Եսի քաղաքին վերայ պատերազմի ելաւ, յորում թէւ ի սկզբան յաղթող գտնուեցաւ, բայց դեռ կոխուր չփերջացած՝ Պետրոս կաթողիկոսը, Հայոց նախարարներն ու Աքաց Գորգի թագաւորը մէջ մտան ու հաշտեցուցին զիրենք, պայման դնելով որ Յովհաննէսը միայն Եկեղակ դաւառին թագաւորէ, իսկ Եշոտ՝ իբրև թագաւորին երկրորդը՝ Հայատանի ուրիշ երկիրներուն իշխէ։

Եյս հաշտութենէն վերջը Աշոտ
տեսնելով որ երկու կողմին ախարարները՝
անդադար մէկ թագաւորը միւսին դէմ
գրգռելու կաշխատին, և որ մեծն է՝
մէկմէկու հետ ամեննեին չեն միաբանիր,
Հայաստանը խաղաղացընելու մտօք՝
որոշեց որ կերպով մի զիւր եղբայրը
կորուսանէ . բայց որպէս զի նոր խռո-
վութիւն չընկնի ազգին մէջ, մէկ օր
ծանր հիւանդ ձևանալով՝ անկողնոյն
քովը մէկ որոգայթաւոր մեքենայ դնել
տուաւ, և երբ թագաւորը զինքը տես-
նելու եկաւ, որոգայթին մէջ բռնուե-
ցաւ ու սկսաւ աղաչել որ կենացը
ինայէ :

Ապիրատ իշխանը, որ նոյն միջոցին
Աշոտի մօտ էր, Յովհաննու թշուա-
ռութեանը մեղքնալով՝ կապեց զինքն
ու այնպէս ձեւացուց որ իբր թէ մեռ-

ցընելու կտանի, բայց տարաւ նորէն
թագաւորեցուց . որով Աշոտ ամօթէն
չկարողանալով՝ Հայաստանի մէջ մնալ,
Կոստանդնուպոլիս գնաց, ուսկից Վա-
սիլ կայսեր օգնութեամբը վերադարձաւ
և իւր առաջին իշխանութեանը մէջ
հաստատուելով՝ ինքզինքը զեղսու-
թեանց տուաւ մինչև իւր մահը :

ԴԱՍ ԼԲ.

ԱԷ-ՌԱՋԻ ԹԱ-ԽԱՐԱԳ ԱՐՀԱ-ԱՆ-ՔԻՆ ՋԻ-Լ ԳԱ-ԳԻ
ԵՐԵՄԵՐԵ ԽԱ-ԴԱ-ՌԵԼ .

Ա'եր երկրի խռովութեան համ-
բաւը Ակիւթացւոց ականջը հասնելով՝
Յովհաննու թագաւորութեան երկրորդ
տարին անթիւ բազմութեամբ Հայաս-
տան մտան, որք Վասպուրական աշ-
խարհէն անցած ժամանակը սոսկաիլ

արիւնհեղութիւններ արին այնտեղ, այնպէս՝ որ Ըրծրունեաց Անեքերիմ թագաւորն այն զօրաւոր թշնամիներէն կրելու չարիքը երևակայելով՝ թուղթդրեց Աստիլ կայսեր, և Ասսպուրական աշխարհը՝ Աբաստիոյ հետ փոխելով՝ իւր բոլոր ժողովրդովը (որ չորս հարիւր հազարի չափ էին) այնտեղ փռեադրուեցաւ:

Ակիւթացիք Ասսպուրականէն անցնելով իւրեանց Տուղրիւ բէկ զօրավարին առաջնորդութեամբը չայտատանի ներսերը փաղեցին, և Նախիջեան, Գուին ու Նիկ գաւառներուն վերայ յարձակեցան, որոց մէջ շատ եկեղեցիք այրեցին և զբնակիչները յուրացութիւն ստիպեցին։ Եւ որովհետեւ Ասսակ Պալհաւունի սպարապետը (Պիտի մագիստրոսի հայրը) նոյն միջոց-

ները Նիկ գաւառի մէջ էր, Տուղրիլի ըռնութիւնները տեսնելով՝ 500 մարդով այն ահազին բազմութեան դէմն ելաւ ու մեծ կոտորած անելով ցրուեց վերենք։ Ատկայն մեղքը որ մինչդեռ Վաստակ այն յաղթութեանը վերայ ուրախացած՝ մէկ առանձին տեղ աղօթք կանէր Ծստուծոյ, այն տեղի պահութած սկիւթացիններէն զարնուելով մեռաւ։

Եյդ միջոցները երբ Յունաց տէրութեան Աքաց Գորգի թագաւորն առստամբեցաւ (որուն ձեռնոտու և խորհրդակից էր այս գործին մէջ Յովհաննէս թագաւորը) ու Վասիլ կայսրը մեծ զօրքով պատերազմի ենիւլով յաղթեց նմա, Յովհաննէս թագաւորն իւրինական երկշուտութեամբը կատկածերով որ կայսրը իւր վերայ ևո պատերազմի կուգայ, 1022 թուին պետրոս կաթո-

ղեկոսը Տրապիզոն ղրկելով՝ թուղթ
գրեց Աշսիլ կայսեր և երդմամբ խոս-
տացաւ Ենին բոլոր գաւառներովը կայ-
սեր տալ, միայն թէ ինքը (Յովհանէսը)
քանի որ կենդանի է՝ թագաւոր լինի,
և կայսրը իրեն բարեկամ ու պաշտ-
պան մնայ:

Աշսիլ ուրախութեամբ ընդունեց
Յովհաննու առաջարկութիւնը, որով
պէտք եղած օգնութիւնն արաւ Յով-
հաննու. այլ և մեծ սէր ու պատիւ-
ցուցուց կաթողիկոսին: Եւ որովհետեւ
նոյն միջոցը հանդիպեցաւ ջրօրհնեաց
օրը, կայսրը կաթողիկոսէն խնդրեց որ
Հայոց ծիսով կատարէ ջրօրհնեաց փա-
ռաւոր հանդէսը. ուստի և Պետրոս
հայրապետը երբ կենաց փայտով գետի
ջուրը խաչակնքեց, իսկոյն գետն իւր
ընթացքէն դադրելով՝ ջուրն անշարժ

մնաց և հրաշալի լոյս երևցաւ ջուրի
վերայ, որով այն օրէն Պետրոս կաթո-
ղիկոսը Գէտադարձ կոչուեցաւ:

Աշսիլի յաջորդ Կոստանդին կայսրը
մեռնելու ժամանակ մեր ազգին մեղ-
քընալով և Ենիին համար եղած անի-
րաւ և ապօրինի դաշնադրութիւնը տես-
նելով՝ մէկ Վիրակոս անունով հայ քա-
հանայ կանչել տուաւ ու դաշնքին
թուղթը յանձնեց իրեն որ տանի Յով-
հաննէս թագաւորին տայ: Իսկ այն
անմիտ ու ընչաքաղց քահանայն թուղթը
իւր մօտը պահեց, և երբ 1034-ին Վի-
քայէլ կայսրը թագաւորեց, տարաւ ի-
րեն տուաւ և դրամական փոխարէն
առաւ տեղը:

Եյս անարժան քահանային արածը
պատմութեան մէջէն անհետ անելու դէպք
և յաւիտենական դատապարտութեան

արժանի՛ մատնութիւն համարելու է.
վամն զի նորա այս հայրենավաճառու-
թիւնն եղաւ Շագրատունեաց հզօր և
բարեկարդ թագաւորութեան կործա-
նուելուն գլխաւոր պատճառը:

Դակ Յովհաննէս քսան տարի թա-
գաւորելէն վերջը մեռաւ, յետ որոյ
Հայաստան երկու ամբողջ տարի անտէր
մնալով՝ Անստ Սարգիս անունով Սիւն-
եաց փառամոլ ու տղէտ իշխանը զօ-
րացաւ և կուզէր Հայոց վերայ թա-
գաւորել։ Նոյն ժամանակները Յունաց
Միքայէլ կայսրն իմանալով Յովհաննու
մահը, իւր դեսպանի ձեռքովը պահան-
ջեց Ենին, բայց երբ նախարարները
չյօժարացան տալ, մեծ զօրք յուղար-
կեց Ենւոյ բնակչաց վերայ։ Եւ թէպէտ
Հայ զօրաց պատրաստականութեամբն
ու անակնկալ յարձակմանը քովը Յոյները

յաղթուեցան, սակայն Անստ Սարգիսը
շատ բանի մէջ գաղանի կերպով ձե-
ռնուու եղաւ նոցա, որպէս զի կայսեր
հաճոյանալով թագաւոր դրուի Հայոց
վերայ։

Եյն ժամանակը Գահլաւունեաց
Վահրամ անունով խոհեմ ու հայրենա-
սէր սպարապետը՝ Սարգսի արածները
տեսնելով՝ Գրիգոր մագիստրոսին հետ
մէկտեղ յորդորեցին զնախարարները,
և Սարգսէն ծածուկ Գետրոս կաթո-
ղիկոսի մօտ զնացին ու միաբան հա-
ւանութեամբ՝ Յովհաննու առաջնոյ եղ-
բօրորդի Գագիկը թագաւորեցին (1042),
որ բազմատեսակ կատարելութիւններով
զարդարուած՝ տամնենօթը տարեկան
պատանինէր։ Անձուր և զնապահ խո-
յաց լգուած զնամնային որմանային զամ-

ԴԱՍ ՀԳ.

Գառնին երկրորդին մնալ բարձրագունեաց նախառութեան վերջանալը.

Գագկայ թագաւորելէն յետոյ Աարդիս իւր խարդախութիւններէն վախունալով՝ գնաց Ենւոյ միջնաբերդին մէջ պահութեցաւ։ Խոկ Գագիկ առանց երկիւղի մինակ Սարգսի մօտ գնաց ու խելացի խօսքերով համոզեց զինքը որ ենէ անկից։ Սարդիս ելաւ միջնաբերդէն ու Սուրմառի ամրոցը քաշուեցաւ. բայց երբ այնտեղ ևս իւր անհանդարտ ընաւորութեամբն սկսաւ յայտնի չարութիւններ անել, Գագիկ զինքը բանտդրաւ, ուսկից նախարարաց անտեղի միջնորդութիւններէն ստիպուելով՝ շուտով ազատեց և դարձեալ սկսաւ բարեկամութեամբ վարուիլ հետը։ Բայց յետոյ իմանալով Սարգսի տիրանենգու-

թիւնը, որ Յոյները իրեն դէմ կը դրգուէր, բռնեց զինքը և կուգէր խեղամահ անել. բայց նա յանցանքը Գրիգոր մագիստրոսին վերայ ձգելով՝ թագաւորին աչքէն հանեց զինքը, որ այս բաներուտ մէջ ամեննին չէր խառնուած. և ինքը (Սարգիսը) իւր քանի մի կուսակից իշխանաց վկայութիւններովն արդարացաւ։

Եյն միջոցները Ո՞նոմախոս Ենին առնելու համար խորամանկութեամբ թուղթ գրեց Սարգսին և մեծամեծ պարգևներ տալ խոստացաւ իրեն, թէ որ կարողանայ համոզել զԳագիկ որ Ենին Յունաց տայ։ Սարգիս այն թուղթը առնելուն պէս՝ մտածեց ոչ միայն Ենին, այլև նոյն խոկ Գագիկը Յունաց ձեռքը մատնել. ուտիի և պատասխան գրեց կայսեր, որ սիրոյ և հաշտութեան

թղթով Ա. Պոլիս հրատիրէ զԳագիկ՝
որպէս զի ինքը (Աարգիս) նոյն միջո-
ցին Անին Յունաց մատնել կարողանայ:
Կայսրը կատարեց Աարգսի ցանկու-
թիւնը: Գագիկ վախնալով Անոնմախոսի
և իւր թշնամեաց չարամտութենէն՝ ի
սկզբան յանձն չառաւ երթալ, բայց
յետոյ տեսնելով նախարարաց երդում-
ները՝ որով կիոստանային Անին մինչև
ի մահ պաշտպանելու, ելաւ դնաց, ա-
ռելի հարկադրուելով՝ քան թէ համո-
զուելով:


Անոնմախոս Գագկայ հետ ցածու-
թեամբ ու իսարդախութեամբ վարուե-
ցաւ. վասն զի թէ եւ ի սկզբան մեծ
պատուով ընդունեց զԳագիկ, բայց
վերջը Անին Յունաց չուալուն համար
բանտ դրաւ զինքը: Այս բանս Անստ
Աարգիսն ու իւր անմիտ կուսակիցները

լսելով Անոյ բանալիները կայսեր յու-
ղարկեցին, որ Գագիկ տեսնելով յու-
սահատեցաւ ու անձարացած Անին Յու-
նաց տուաւ (1046):

Գագիկը Պոլսէն կայսեր ընծայած
կապաղովկիոյ Պիզու քաղաքը զնաց,
յորում սիրտը կմաշէր լսելով իւր ազգի
խղճալի վիճակը, որուն պատճառ եղաւ
իւր մատնիչներուն աններելի չարու-
թիւնները, և որով իւրեանց անձնական
շահուն ու սնոտի փառացը համար
մարդկութեան օրէնքը ոտքի տակ առ-
նելով՝ ամբողջ ազգ մի գերութեան
մէջ ձգեցին:

Եյսուհետև, այսինքն Իագրատու-
նեաց թագաւորութան վերջանալէն յեւ
տոյ Յոյները՝ չայոց դէմ ունեցած աւ-
տելութիւնը տաստկացընելով, սկսան
ամենայն տեսակնակատինք անել մեր

աղքին, այնպէս՝ որ մինչեւ կեռարիոյ
Յոյն մետրապօլիտը իւր շան անունը
Արմէն դրաւ։ Գագիկ այս բանս լսելով,
յարմար միջոցի կսպասէր որ այն նա-
խատանաց վրէժը հանէ. ուստի մէկ
օր իւր ծառաներովը մետրապօլտին գը-
նաց, և մինչդեռ սեղանի վերայ էին,
Գագիկ ինդրեց մետրապօլտէն որ շունը
կանչէ։ Մետրապօլիտն ի սկզբան չու-
զեց կանչել այլևայլ պատճառներով՝
բայց վերջը հարկադրելով՝ Արքն կանչեց,
և իսկոյն շունն եկաւ։ Գագիկ այս ա-
նուանադրութեան պատճառը հարցուց,
և մետրապօլիտը „Պղտիկ լինելուն հա-
մար Արմէն կասենք“ պատասխանեց։
Գագիկ աւելի համբերել չկարողա-
նալով՝ աչք արաւ իւր ծառանե-
րուն, որք յանկարծ շունն ու Մար-
կոսը բռնեցին, մէկ պարկի մէջ ձգե-



ցին, և սկսան շունը ծեծել, որ կատաղութենէն այնքան իւածիւը Եպիսկոպոսին՝ մինչեւ Երկուքն ալ մեռան:

Դակ Յօյները՝ Մարկոս մետրապօլիտի
նախատական մահուանը վերայ իրա-
ւամբ կատաղելով՝ սաստիկ վրէժիրն-
դրութեամբ հետևեցան Գաղիկն սպան-
նելու. ուստի և մէկ օր մինչդեռ Կի-
զիստրա բերդի պարտիզին մէջ կզքոս-
նուր Գաղիկ, բռնեցին զինքն ու մե-
ռուցին (1079):

անց գտնեմ ի ու լուս մասն ուժում առաջը
պիտ առաջը, միջակա առաջը՝ աղքակա միջակա ար-
և այս, բայց առաջը, բայց առաջը, առաջը, առաջը, բայց
առաջ բայց առաջը թիրութ և սթիւթիան, միջակ թիր-
ութ առաջը թիրութ և սթիւթիան, միջակ թիր-

այլ դու վեճած զմաց մասին և այլ
դա՛յ Ա զմեծց ՔԱՆՈՒԱԾՔ ՊԱՑՄՈՒԹԵԱՆ ՎԵՆՅՈՐԱՄ
: մա ԲԱԳԻՐՍՅՈՒՆԵԱՑ ՇԱԳԱԿՈՐՈՒԹԵԱՆ ·
Վայուսակամ սովոր Ա զյամբոց իւս
ԴԱՍ Լ. Դ.

Բազրուատունեաց թագաւորութիւնն սկսաւ Արմ
բատ Խոստովանողի որդի Ըշո՞ Տադրադունի անու-
նով որդիէն, որ իւր հաւատարիմ ծառայութեամբքը
Եղիսաբոսի ամիրատետին սիրելը լինելով՝ նախա-
րարները Գեհորդ կաթողիկոսի հետ միասին խնդրե-
ցին, և ամիրապետը թագ ու ծիրանի յուղարկեց
իրեն։ Ըշոտ իսելքով ու հեռատեսութեամբ թա-
գաւորեց, ձայ թագաւորաց առաջին կարգելու նո-
րոգեց, Յունաց կայսեր հետ միշտ բարեկամ մնաց
և 26 տարի իշխելէն ու հինգ տարի թագաւորելէն
յետոյ մեռաւ։

Ըշոտ առաջինէն յետոյ ութ անձինք թա-
գաւորեցին, այսինքն՝ Ամբատ առաջին, Ըշոտ երկ-
րորդ, Երաս, Ըշոտ երրորդ, Ամբատ երկրորդ, Գա-
ղիկ առաջին, Յովհաննէս և Գագիկ երկրորդ կամ
վերջին (885 — 1046), որոց ժամանակ ձայ ժո-
ղովրդոց մէջ ատելութիւնն ու նախանձը մարզպա-
նաց ժամանակին աւելի ծագկելով՝ Ձայաստանը

թէւ իւր քանի մի թագաւորաց խոհեմութեամբն
ու քաջութեամբը երբեմն երբեմն բարօրութիւն
տեսաւ, բայց շատ անդամ արտաքին և մանաւանդ
ներբին թշնամեաց խոռոչութիւններովը սարսափելի
թշուառութիւններ կլեց, որոց հեաւանդն եղաւ
իւր թագաւորութեան քիչ ժամանակէն կրծա-
նութիւն։ Հայաստանի արտաքին թշնամիներն եղան
Պարսիկները, Յոյները, Հապարացիներն ու համ-
թարները, որք ոչ միայն Բազրուատունի թագաւո-
րաց ժամանակ, այլ և Անին Յունաց մասնուելէն
յետոյ ևս վեց անողամ մէկմէկու ձեռքէ յամիշտա-
կեցին Բազրուատունեաց մայրաքաղաքը՝ մինչև որ
1319-ին սաստիկ երկրաշարժին պատճառաւը բնա-
կիչները զանազան երկերներ գաղթելով՝ Անին բա-
լուովին աւելիակ դարձաւ։
Դակ ներբին թշնամիները՝ զիսաւորակէս երկու
հոգի, առաջինը Ախիակոս անունով տմարտի քահա-
նոյն, որ արծաթսիւաթենէն աչքը մութ կոխած՝
1034-ին իւր հայրենիքը Յունաց Անիքայել կայ-
սեր վաճառեց. և երկրորդը՝ Աշխատ Ատղիս կո-
չուած տղէտ ու փառամալ իշխանը, որ խարդա-
խութեամբ մասնեց Յունաց թէ զԳագիկ վերջինը
և թէ իւր հայրենիքը։

Այս ալ պէտք է ասել, որ Բագրատունի
թագաւորաց գործերը՝ համեմատելով նոյս ժա-
մանակի տգէտ իշխանաց տիրաննենքութիւններուն
ու փառամոլութիւններուն՝ մեծ քաջութեանց տեղ
համարելու է։ Աեղադրանաց արժանին է միայն
Յովհաննէս թագաւորը, որ իւր թուլութեամբը
ժողովրդոց ներկայ և ապագայ վիճակին վերայ հոգ
չտանելով՝ իւր կեանքը հանգստութեամբ անցը-
նելու համար՝ մեռնելէն վերջը Անին Յունաց տալ
խոստացաւ, որով այնքան անմեղ արեանց թա-
փուելուն պատճառ եղաւ։

Գշտելի է նաև որ Տագրատունեաց ժամանակ
Վասպուրական աշխարհի մէջ Արծրունիք կթա-
դաւորէին, որոց վերջինը — Աննեքերիմ՝ իւր շրջակայ-
թ շնամեաց անընդհատ յարձակմունքէն յուսահա-
տելով, 1021-ին Վասպուրականը Յունաց տուաւ-
ե տեղը Աբբաստիա գաւառն առաւ, յորում իւր
երեք (Դաւիթ, Ատովմ և Աբուսահլ) յաջորդքը
նատան ընդ իշխանութեամբ Յունաց 59 տարի
(1021 — 1080), յետ որոց բոլորովին վերջացաւ
նաև Արծրունեաց թագաւորութիւնը:

Գ Ի Ո Ւ Խ Զ Ո Ր Ր Ո Ր Դ ։ Ա յ ա ց
Ս ա մ է ։ Ե լ լ ո ւ ն ի ն կ ա ր ե մ ։ Ա յ ա ց
Խ ա մ ի ս ա մ ա ր ե մ ։ Ք ա մ ա ր ե մ ։ Ա յ ա ց
Ո Ռ Ե Բ Ե Ն Ե Ս Յ Ե Ց ։ Ա յ ա ց

Որութինեանց թագաւորութիւնն ըսկ-
սաւ Գագիկ վերջին թագաւորի Առ-էէն
անունով աղզականէն, որ Գագկայ հետ
Պիզու քաղաքը կբնակէր։ Աս Գագկայ
բռնուելէն վերջը միտքը դրաւ որ Հայոց
նոր թագաւորութիւն մի սկսէ,
բայց տեսնելով որ Հայաստանի տւե-
րակաց մէջ անկարելի է իւր դիտաւո-
րութիւնը յառաջ տանել, իւր Կոս-
տանդ որդւոյն հետ Խիլիկիոյ կողմերը
գնաց, սյնտեղի Հայոց սիրտը հայրե-

Նեաց սիրովը վառելով իւր հետը միացուց ու քանի մի բերդերու և քաղաքներու քաջութեամբ տիրելէն յետոյ սկսաւ անկախութեամբ կառավարել ազգը (1080):

Ուուրենի տեղն անցաւ իւր որդին
Կոստանդին առաջին, որ Հօրը բարեմասնու-
թեանցը հետևելով՝ իւր զգուշաւորու-
թեամբը, պատերազմական յարմարու-
թեամբն ու բազունի և Օշին անու-
նով հայ իշխանաց օգնութեամբը Յու-
նաց ձեռքէն շատ տեղեր նուաճեց և
տէրութեան սահմանն ընդարձակեց:
Սա իւր իշխանութեան առաջին տա-
րին, երբ Վատինացիք՝ առաջին խաչա-
կիր զօրքը ժողովելով՝ Նրուսաղէմը
Տաճկաց ձեռքէն աղատելու կերթային,
ուտելեաց կողմանէ, մեծ օգնութիւն
արաւ նոցաւ, որով աղնիւ ընծաներ ու

ասպետութիւն ստացաւ: Եսրա տեղն
անցաւ իւր որդին թարգու, որ անուանի
եղաւ իւր զանազան քաջութիւններովն
ու յաղթութիւններովը: Պարսիկներն
ու Սկիւթացիքը, որ շատ զօրքով Վի-
լիկիոյ վերայ եկած էին, թորոս իւր
վեռն եղբօր հետ մրասին դիմացներն
ելաւ ու երկու անգամ մեծ կոտորած
անելով՝ հալածեց զիրենք: Յետոյ Յու-
նաց հետ պատերազմելով զանազան քա-
ղաքներ առաւ, որոց մէջ նշանաւորն էր
Ենարզարա քաղաքը, յորում իբրև
Աստուծոյ յաջողելուն նշան՝ մէկ փա-
ռաւոր եկեղեցի շինեց Առ-բէ Զօրգութան
անունով:

Եւ որովհետեւ Գագիկ Երկրորդը՝
Վանտիլեան յոյն իշխաններն սպաննել
էին, Թաղոս բաւական զօրքով պա-
տերազմի ելաւ, բայց տեսնելով որ անա-

ոիկ է նոցա կեցած Կիզիստրա բերդը,
գիշերուան ժամանակ դարանի դրաւ
շատ մի քաջ Երիտասարդներ ու ինքը
բերդին քովին հեռացաւ: Առաւօտը երբ
Ո'անտիլեանը տեսան որ թորոսն այնտեղ
չէ, կարծեցին թէ յուսահատելով յետ
դարձած է. ուստի բերդին դռները բա-
նալով սկսան համարձակ դուրս ու ներս
անել, որով յանկարծ թորոսի թողած
դարանակալ չայերը նոցա վերայ վա-
զեցին ու ձեռքերնին ընկածը կոտորե-
ցին: «Սոյն միջոցին թորոսն ալ համնե-
լով՝ բերդին տիրեց, Ո'անտիլեան երեք
եղբարդը բռնեց ու հետզհետէ կոտորեց,
և այնպէսով մեր ազգին վրէժը հանեց
Յոյներէն:

Թորոս որդի չունենալով՝ տեղն ան-
ցաւ իւր եղբայրը 1123 առաջին (1123), որ
Ո'ամեստիա և ուրիշ քաղաքներ առնե-
նելով մինչև Տարսոս հասաւ:

Ա ևսնէն յետոյ թագաւորեց իւր որ-
դին էր էր էր էր, որ շատ քաջու-
թեամբ պաշտպանեց Վիլիկիան Յունաց
յարձակմունքէն: Յետոյ իշխեցին նախ՝
1168 պայլ (1168 — 1169), որ թորոսի
աներն էր և ազգաւ լատին, Երկրորդ՝
թորոսի եղբայրը Ուլի (1169 — 1174),
երրորդ Ուուրէն՝ թորոս Երկրորդի եղ-
բօր Ստեփանէի որդին, որ մեծ ինամք
ունեցաւ իւր Երկրի բարելաւութեանը
վերայ: Այ Տորսոնը երբ Յունաց ձեռ-
քէն առաւ, Լամբրոնի չեթում իշխա-
նի հետ (որ Յունաց կայսեր կողմանէ
կառավարիչ և պահապան կարգուած
էր քաղաքին) թշնամացաւ, և Երկու
կողմէն պատերազմ բացուելով՝ չե-
թում նեղուեցաւ ու Մատիոքայ կոմ-
սին օգնութիւնը խնդրեց. կոմսը խար-
դախութեամբ բարեկամութիւն ցուցը-

նելով կոչիւնքի հրատիրեց զմխութէնը
և բռնեց բանտ դրաւ։ Այս պատճա-
ռաւ իւր Լևոն եղբայրը մէկէն զօրք ժո-
ղովեց ու պատերազմի ելաւ։ Ճեթում
ճարաշատեալ հաշտութիւն խօսեցաւ,
որով Ոտոբէնն ևս ազատեց ու բերաւ
նորէն իւր աթոռը նստեցուց; Խոկ
Ոտոբէն 11 տարի իշխելէն յետոյ, ազ-
գին կառավարութիւնը իւր Լևոն եղ-
բօրը յանձեց և ինքը Դրազարկ վանքը
քաշուելով՝ քիչ ժամանակէն սրբու-
թեամբ մեռաւ։ վաղջևա լ առաջ մէջ
յմանքով զմուլավ բամուօ զո) ուժ իւ
ծարուրավ մասաշաբ և չվախառով
ուժով և ացանուա (միջարագ. դէ-
մէ խոյժուրազ նրանքուար մինքով
ևով լազարում և ացանում նրոն-
ցամ զնում քնզրով ցուժներո մին-
ցուց միջնաւախճազ զնամնուայ

անողաք կոստ ուղարկանէ զմունքնուա
տուն քանի ցղալաւ սովորակազի պարագ
ուղարկան առաջնորդ պատ մեծաւ լ ազատ
լ և երկու տէն դնլ ժենում երեսուր ։

Լ ևոն Երկրորդ իւր այլեւայլ կատա-
րելութիւններովն ու Խկոնիոյ Ոտոսոմ
ամիրային յաղթելովը անուանի լինելով՝
սկսաւ հետղչետէ իւր տէրութիւնը
ծաղկեցրնել և ընդարձակել։ Սա աթո-
ռը Տարսոնէն Սիս փոխադրեց, և քա-
ղաքին մէջ հիւանդանոց և ուրիշ բարե-
պաշտական շնութիւններ անելով՝ գրե-
թէ բոլորովին նորոգեց։ Երբ խաչակիր
զօրքը Երկրորդ անդամ գումարուելով
Երուսաղէմն ազատելու կերթար, Լ ևոն
խաչակրաց սովի ժամանակ ոչ միայն
առատ պաշար յուղարկեց նոցա, այլ
և առանձին թղթով իմացուց իւր պատ-
րաստականութիւնը ձեռքէն եկած օգ-

Նութիւնը չխնայելու, ուստի Գերմանացւոց Փրեղերիկոս կայսրը թագ իսոստացաւ Լևոնին. բայց որովհետև կայսրը քիչ ժամանակէն մեռաւ, նորա Հենրիկոս յաջորդն ու Աեղեստիանոս պապը կատարեցին Փրեղերիկոսի խոստմոնքը՝ թագ և դրօշ յուղարկելով՝ որով Առն Ախս մայրաքաղաքի Յոփիա Եկեղեցւոյն մէջ 1198 թուականին թագաւոր օծուեցաւ։ Գրիգոր ապիրատ կաթողիկոսին ձեռքովը։ Այս Լևոնի Լատինաց հետ բարեկամութիւն անելուն համար երկու թշնամիք յարձակեցան վերան, այսինքն Կիոնիոյ և Տերիոյ ²⁵ ամիրաները, որոց Լևոն բաջութեամբ յաղթելով մեծ աւարով Վիլիկիա դարձաւ։

²⁵ Կիոնիա կամ Տկոնիոնը՝ Անկայոնիայի մայրաքաղաքն էր, այժմ Փոքր Ասիւզ գաւառներէն մէկը. իսկ Տերիան՝ Ասորւոց մայրաքաղաքը, որ այժմ Հունը կաստի։

Առն երկրորդին յաջորդեց իւր Օմբէկ (Խոյքէլլո) աղջիկը, որ Անտիոքայ լատին կոմահի Փելտպոյ որդւոյն հետ կարգուեցաւ, որ մօրը կողմանէ հայ էր. բայց երբ Փիլիպպոս երկու տարի թագաւորելէն յետոյ Սաոյ հարատութիւններն Անտիոք կրել սկսաւ, չայ իշխանները բարկացան, և մէկ օր Փիլիպպոսը Անտիոք գնալու ժամանակ ճանապարհին բռնեցին ու Տարձըրբերդի դղեակին մէջ փակեցին, ուր քիչ ժամանակէն մեռաւ։ Երկու տարիէն յետոյ Օարէլ Առատանդին իշխանի Տէլուս որդւոյն հետ կարգուեցաւ, որ Երշակունեաց ցեղէն էր և Ուուրինեանց հետ ազգակցութիւն ունէր, ուստի և 1224 թ. մեծ հանդիսով թագաւոր օծեցին։

Այս հեթումը իւր Առատանդին հօրը խելացի խորհուրդներովն ու օգնութեամբը նորանոր բարեկարգութեամբ

Վիլիկիան զարդարելով՝ խաղաղութեամբ
կտռավարեց տէրութիւնը, բայց Նկոնիոյ
ամիրան, որպէս Կայ Ամբրոնի Կոս-
տանդին իշխանը ապստամբելով պաշ-
տերազմի ելան, ու յաղթուեցան Հե-
թումէն: Նոյն միջոցները Եգիպտոսի
ֆնտուխտար ամիրան դեսպան յուղար-
կեց որ Եգիպտացւոցմէ առած քանի
մի քաղաքները յետ տայ. Հեթում
յանձն չառնելով՝ զօրքը իւր Լևոն և
Թարոս որդւոցը յանձնեց և ինքը Ծա-
թարներէն օգնութիւն առնելու զնաց,
բայց մինչև իւր վերադառնալը ֆնտուխ-
տար շատ զօրքով հասաւ Թարոսն սպան-
նեց, Լևոնը գերի բռնեց և Սայս հա-
րըստութիւնները Վկողապտելով՝ Եգիպտ-
ոսա դարձաւ:

Հեթում մերբոր Թաթարստանէն
դարձաւ ու ամենայն քան տակու վրայ

եղած տեսաս, վարձած զօրքը յետ յուն-
զարկեց և իւր որդւոց կորստեանն ու
բազմաթիւ գերիներուն համար մեծ
սուզի մշջ ընկզմեցաւ: Յետոյ իւր Լևոն
որդին գերութենէն ազատելու համար
մեծագին ընծաներ յուզարկեց ամիրա-
յին, բայց ամիրան՝ Հեթում Ծա-
գաւորի՝ Թաթարաց խանի հետ ունե-
ցած Կիզակակցութիւնը գիտնալով,
Հեթումը միջնորդութեամբ փոխարէն
ուզեց իւր Սղուր որդին՝ որ գերի էր
Թաթարստան: Հեթում ամենայն ջանք
իւ գործ գնելով՝ Սղուրը Թաթարաց
խանէն առաւ Եգիպտոս հասուց, և
նորա փոխարէն իւր Լևոն որդին գե-
րութենէն ազատեց, որուն և նոյն տա-
րին իւր տեղը Ծագաւոր դրաւ (1269):
Լևոն երրորդը Յակոբ կամողիկոսի
խորհրդովս աթուր Սիս քաղաքէն Տար-

սոն փոխադրեց, ուր մեծ հանդիսով թաւգաւոր օծուեցաւ: Յետոյ իւր հեռատեսութեամբը ազգին անցեալ և ներկայ վիճակին խորերը թափանցելով՝ ամենահարկաւոր տեսաւ ուսումնական գիտութեանց ծաղկեցնելը: ուստի և մէկէն սկսաւ ամենայն տեղ դպրոցներ բանալ, որ տղիտութեան, նախանձու և փառամոլութեան արմատները չորցընելով՝ գիտութիւն, սէր և միութիւն հաստատէ գէթ իւր ապագայ ժողովրդոց մէջ: նոյնպէս հմուտ անձանց ձեռքով նախնեաց շարադրած ու թարգմանած գրեթէ բոլոր ձեռագրերը օրինակել տալով՝ զանազան վանքեր յուղարկեց, և աշխատեցաւ որ պիտանի գրքեր շարադրուին:

Չնայելով նորա այս գեղեցիկ ձեռնարկութիւններին, տղիտութիւնը դար-

ձեալ իւր ազգակործան զէնքը ձեռք առաւ, որով իւր ազգականներէն ոմանք նախանձելով լեռնի փառացը՝ Եղիպտոսի ֆնտուխտար ամիրան նորա դէմը գրգռեցին: Սակայն Եստուած, որ միշտ անմեղներուն պաշտպան է, զօրացուց լեռնի սուրը, այնպէս՝ որ ֆնտուխտար երբ ահազին զօրքով Վիլիկիոյ վերայ վազեց, լեռն զօրք ժողովելով՝ իւր Սմբատ սպարապետ եղօրը հետ մէկտեղ թշնամեաց վերայ յարձակեցաւ, ու այնպիսի՛ կոտորած արաւ, որ Փընտուխտար հարկադրեցաւ հաշտութիւն խօսելու: Եսկից զատ՝ Եկոնիոյ ամիրան, որ նոյն տարին երեք անգամ Վիլիկիա արշաւեց, լեռն ամեն անգամ քաջութեամբ ու խոհեմութեամբ պատերազմեց ու յաղթեց նորան: և քսան տարի ամենայն բարեմասնութեամբք թագաւորելէն վերջը մեռաւ:

գուման զգմքը մածպայծաբա դրի յամձ
գմանու մշղմմայդասլք. դրի խոցու, առուս
Հերթաց Երկուրդն որով Ունչիւտանց Շահասիստ
զեւք աղու Անեան Անընդառաւը. Խոտի կոսո
ուշը և պատուի Երրորդի որդին
Եր, որ սաստիկ կրօնասէր լինելով՝ ի-
մկղքան չուզեց թագաւոր օծուիլ. ուստի
և չորս տարի իշխելէն յետոյ իւր եղ-
բայր Թագաւոր օծել տա-
լով ինքը վանք քաշուեցաւ. բայց տես-
նելով որ առանց իրեն անկարգութիւն-
ները շատնալու վրայ են, ժողովրդեան
թախանձանը զիջանելով՝ նորէն թա-
գաւորեց ու հինգ անգամ պատերազմ
արաւ Եղիպտացւոց և Նիկայոնացւոց
հետ, որոց մէջ միշտ յաղթող գտնու-
ելով՝ նախ Դամասկոսի Սուսամիշ ամի-
րան բռնեց ու Թաթարաց Պաղան խա-
նին ընծայեց, և ապա Եղիպտոսի Սուլ-

թան Լաշին անունով ամիրապետը Յաղ-
ղատ փախուց, որ վերջը հարկադրե-
ցաւ հաշտութիւն իումել Հեթմոյ Տետ:
Հեթում կուսակրօն լինելով՝ իրեն
որդեգիր առաւ իւր եղօրորդի Եւսոր,
որ իւր ընտիր բարքովս ու խոհեմու-
թեամբը շատ լաւ կառավարեց ազգը:
Իւսն չորորդէն յետոյ թագաւորեց
Հեթմոյ Եղեայրը Օնն որոյ ժամանակ
սաստիկ Երկրաշարժ եղաւ Երարատ գա-
ւառի, Ովոնեաց աշխարհի և մանաւանդ
Մի քաղաքին մէջ (1319), որով Հայ-
աստանի արիւնարբու թշնամեաց Ճեռ-
քէն աղատուած շինուածոց մեծ մասը
կործանուելով՝ բնակիչքը բազմութեամբ
այլեայլ Երկիրներ, այսինքն Պարսկաստ-
ան, Թաթարաստան, Խորիմ, Աւստ-
ան և ուրիշ տեղեր գաղթեցին:


Օշինէն յետոյ թագաւորեցին Աւոն
հինգերորդ՝ որ Օշինի որդին էր, Աւոն
երրորդի ։ Զաքըլուն աղջկանը տղան, այլ
և Գուիդոր և Կոստանդին, որք նշա-
նաւոր գործողութիւն չունենալով՝ պատ-
մութիւնը ձիշդ աւանդելու համար ա-
նունները միայն դրինք այստեղ։

Կոստանդինի մահուանէն վերջը երեք
տարի չայոց աթոռն առանց թագա-
ւորի մնաց. բայց յետոյ Ուրբանոս հինգ-
երորդ պապի խորհրդով Կոստինեան
Լոն Ացելերու թագաւորեցուցին՝ տասն-
և մէկ տարեկան հասակին, որ միայն
մօրը կողմանէ հայ էր։ Սա թէև խե-
լացի ու բարեկաշտ էր և չայոց վի-
ճակը բարւոքելու համար շատ դիտառ-
ըութիւններ ունէր, բայց Եզիպտացւոց
սուլթանի անդադար յարձակունքէն
ժամանակ չունեցաւ գործադրելու. ուս-

տի և Նորա անթիւ գօրացը բաւական
ժամանակ դիմաղրելէն յետոյ տոփի պատ-
ճառաւ անձնատուր եղաւ և իւր ըն-
տանեօքը գերի տարուեցաւ յԵղիպտոս,
որով չայոց թագաւորութիւնը բոլո-
րովին վերջացաւ (1375)։ Այս այսուր
Աւոն եօթը տարի բանտը կենալէն
յետոյ ։ Ապանիացւոց Յովհաննէս թա-
գաւորին ինդրանօքը գերութենէն ա-
զատեցաւ (1382), և գնաց նախ ըն-
տանեօքը յԵրուսաղէմ ի շնորհակա-
լութիւն Վստուծոյ, ուր Մարիամ կինն
ու Փիննա աղջիկը թողուց՝ իրենց ու-
ղելովը, և ապա Եւրոպա անցնելով
Շոռոմ գնաց, ուր մեծապէս պատու-
եցաւ Ուրբանոս ։ Օ պապէն. անկից
Ապանիա անցաւ ու Եզիպտացւոց գե-
րութենէն աղատուելուն համար շնոր-
հակալութիւն արաւ թագաւորին, որով

Թագաւորը Մագրիսում մէջ բնակուա
թիւն տուաւ Լևոնի ու 6000 ֆրանկ
տարեկան ոռձիկնշանակեց նմա: Լևոն
քանիմի տարիէն վերջն ալ Գաղղիա
կնաց, և միշտ աշխատեցաւ օգնութիւն
գտնելու հայոց թագաւորութիւնը վեր
բականդնելու համար, բայց Փարիզու
մէջ հիւանդանալով 1393-ին նոյեմբերի
22-ին վախճանեցաւ ուսկայելուչ հանգ
դիսով Աթեղեստինեան վանքին մեջը թա-
ղուեցաւ: Ա Ներաստոցի ցգօմնաս
մէջը նախանդ գտ լուսաւ միջնայ
ու բարձր պարսի զիջչաւ ամսմիջ ու
խոյժացան արտուր այսաւ Ա ցիոնի
տասար սիրածն գտ բամբ նու ու
զիջին սիրածը Օ սուսազդրի ապօ-
քի ըստ պատրիքի ու ապօք սիրածը Ս
պահ զանաշ մովզառարտ մէծին այ
խոյն սիրածն ապօք միջնայալաւ

Հետո Զ. ԹԱՐԱԽՈՒ ՀԱՅՈՅ.



բանական կունդը՝ առաջ մեջ ոճած զամուշը ցմունացն է և մեջյ բացելիքարմէց զատիչի զատարման բաշխութեան պատութեան

ՊՈՒՐԻՆԵԱՆՑ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ. Տառ

Ոսուրէնէն մինչև Լեռն և իշխնցին՝ Առաքան-
դին առաջին, Խաչոս առաջին, Լեռն առաջին, որք
իւրեանց զանազան քաջութիւններով անու անի ե-
ղան։ Ի սոցանէ վերջինը Յունաց Յովհաննէն կոմ-
սենոս կայսրէն յաղթուելով բանտին մէջ մեռաւ։
Լեռնի տեղն անցաւ Խաչոս Երիտրէ, որ զարմանալը
քաջութեամբը դարձեալ վերականգնեց Առուբինեանց
իշխանութիւնը, և Յունաց կայսեր հետ բարե-
կամութիւն հաստատելով ազգը խաղաղութեամբ
կառավարեց։ Յետոյ իշխնցին Խաչոս Պայուլ և Ալեք-
սոք յիշխատակի արժանի պատմութիւն չըթողին։
Աշեջին յաջորդն եղաւ Առաքէն Երիտրէ, որ Տար-

սոնը Յունաց ձեռքէն առաւ, և եթում անունով
ապստամբ իշխանը հնազանդեցուց իրեն, և տէրու-
թեան իշխանութիւնը իւր Աւոն եղբօրը յանձնե-
լով՝ վանք քաշուեցաւ ու սրբութեամբ մեռաւ:

Աւոն սովի ժամանակ լատինացւոց խաչակիր
զօրացն օդնելով՝ Գրեմանացւոց և ենրիկոս կայսրէն
թագ և դրոշ լնդունեցաւ և 1198-ին թագաւոր
ծծուեցաւ:

Աւոնէն յետոյ թագաւորեցին՝ Օտտէն Ռո-
դու-հն, Փէլեռալու և Տէլու-տուալին, որոց մերայ
նշանաւոր պատմութիւն չկայ: և եթումին յա-
ջորդեց իւր որդին Աւոն Էրրոր, որ ազգը ուսում-
նական դաստիարակութեամբ կրթելու համար մեծ
փոյթ ունեցաւ, և հին ու աւրուած ձեռագիւներն
օրինակել տուաւ:

Աւոն երբորդէն յետոյ թագաւորեցին՝ և ե-
թում երկրորդ, Թարոս երրորդ և Ամատ, որք
միմեանց դէմ սոսկալի, անգթութիւններ արին:
Յետոյ թագաւորեց և եթում երկրորդի որդին Աւոն
չորրորդը, որոյ ժամանակ եղած եկեղեցական քանի
մի ծէսերուն սփոփոխութիւնը ո՞չ միայն նորա քա-
ղաքական պարապմանցն արգելք եղաւ, այլ իւր
և եթում թագաւորահօր կորստեանը պատճառ:

Եյնուշեաւ Օշին՝ Ենարդաբա քաղաքի թա-
թար իշխանին Վեռնի և և եթմոյ դէմ արած դա-
ւաճանութիւնը լսելով՝ նորա դէմն ելաւ, հալա-
ծեց և սկսաւ ինքը թագաւորել:


Օշինէն յետոյ թագաւորեցին՝ Վեռն հինգե-
րորդ: Վերջինս խելացի ու բարեպաշտ լինելով՝
շատ լաւ սկսաւ կառավարել ազգը, բայց մեղք որ
ժամանակին հանգամանքը չթողուցին իւր բարի
դիտաւորութիւններն յառաջ տանելու: Վասն զի
և ագարացւոց պատերազմին ժամանակ սովի պատ-
ճառաւ անձնատուր լինելով՝ գերի տալուեցաւ
յեգիպտոս, ուսկից եօթը տարիէն յետոյ Սպա-
նիացւոց թագաւորին խնդրանօքն աղատուելով՝ Եւ-
րոպա գնաց և 1393 թուականին Փարիզու մէջ
վախճանեցաւ:

Եյսէս ահա Ոռորինեանց տէլութիւնը 295
տարի տեւեց, 8 ինքնազլուխ իշխանապետներ ու 16
թագաւորներ ունեցաւ և 1375 թուականին բոլո-
րովին վերջացաւ:

ան Ազգաց ապարակուն ։ միշտ մասք առ յ
առ ճայռ ներ լուծիմ և հանդ է միջավայր զան
ույս ։ այդ մեջ աղոթ խօժայ զմայ ել տեսնաւ։
Հայուարան զցով ասսի և ընծ
մամ մամ ։ միջավայրան լուծ միշտ ։
Հայ մամ աշարակաց ու զբայ մայ սմայդ ։ ի ։ զբոյ
որ գր մա ըստ ։ ըբր լայախառայ ասսի այ առաց
կիրա զայ միջարան զցունարման միջամանան
իր մաս ։ այ մասուն հայու միմամ ի այս առաջի
ասսի միու խամանան ապատար ըստ բայրա
ապատար միջ ապամանան առ առան
արք լուծ միջ ։ ըստ ստայիլիք ։
Հայ մասարան մասուն միջու ասսի ըստ բայրա
մի արդիկափ միջարան ։ ԸՆԸՆ և ա զույր արոյ
։ ապամանանայ

ԸՆԸՆ զմայ եւ այժմ ըստ մամ միջու ։
Ա ա զման մրամանչի ու այլամանչի Յ ըստ մա միու
այլոյ միջամանան ։ ԸՆԸՆ և ա ապամ զմայ արան
։ ապամ միջ միջոյ

ՏԵՂԻԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ.




ամիշ զուռամհնմ բարեամշն դո , միշ
ագ ծմ ծոս ապաստառն զանու րո
սուն սոյս ասթերադասուն զնուն նուն
ՊԱՐՍԻՑ, ՏԱՄԿԱՑ ԵՒ ՌՈՒՍԱՑ ԻԾԽԱՆՈՒԹԵԱՆ ՑԱԿ
դոյ սոյս վայսարա չէ վազավ դո խոյն
ուն և զմունքը սպազո մարձասո նուն
ՈՉՈՒԲԻՆԵԱՑ Ծ-ԱՊԱԼՈՐՈՒԾԵԱՆԵՆ յեւ
տոյ Կիլեկիան ի սկզբան Նդիպտացւոց
և ապա Մ'ահմէտ սուլԾ-անի ժամանակ՝
Տաճկաց ձեռքը մնաց . իսկ բուն չայ-
աստանը վաղուց արդէն բաժնուած էր
Պարսից և Յունաց մէջ :

1397-ին Կօղբէկ թամ-արաց Լանկ-
թամուր բոնաւորն եկաւ չայաստան,
ուր երեք ամիս կենալով՝ բոլորովին
քանդեց ու աւերակ դարձուց, և շատ
գիրիներ ու ձեռագիր մատեաններ տա-
րաւ Մմրդանդ քաղաքը — Լանկթա-
մովի բոնութեանց ժամանակ նշանա-
ւոր եղաւ Կարնէ անունով Մշեցի հայու-

հին, որ թշնամեաց անձնատուր զինելու համար՝ ձեռքբառուր առած մեծ քաջութեամբ պատերազմեցաւ, բայց տեսնելով որ կարելի չէ աղատիլ, նախ իւր ուժ տարեկան որդին սպաննեց և յետոյ ինքողինքը լեռնէն վար ձգելով մեռաւ աննման քաջութեամբ։

Յետոյ յարձակեցան Հայաստանի վերայ Պարսից Շահթամազ (1581) և Շահաբաս (1605) թագաւորները Աերջինս (Օսմանցւոց դէմ պատերազմած ժամանակ), Հայաստանը անմարդաբնակ թողելու մոքով 14 հազար տուն այտարաւ Պարսկաստան, որք տասը տարիէն յետոյ Նոր Զուղա քաղաքը շինեցին Ասպահանայ մերձակայքը։


Եյս սոսկալի խեղճութեանց միջոցին մեծ օգնութիւն արաւ Աիմեաց աշխարհի Հայերուն։ Դասիթ անունով



ԿԱՐԻՆԵ ՄՃԵՑԻՆ.

քաջ ու խելացիսպարապետը, որ իւր
Անիկմար զինակցինայաջակցութեամբը
շատ քաջութիւններ արաւ, յորոց նշան
նաւորնայս գէրը 1722-ին Տաճիկ-
ները 70 հազար հոգուով Ախնեաց աշ-
խարհին վերայ եկան, Դաւիթիւր 453
զօրականներովը բերդին մէջ ամրացաւ
և վեց օր թշնամեաց դէմ քաջութեամբ
պատերազմեցաւ։ Իրեն յաղթութեան
ապահով միջոցն էր բերդին բարձր ու
յարմար դիրքը, ուստից իրենք դրսի
եղածները կտեսնէին, իսկ դրսինները
զիրենք չէին տեսներ. ուստի և Տաճիկ-
ները յուսահատելով՝ երբ սկսան բեր-
դին քանի մի տեղերը բարձր գործիք-
ներ դնել որ պարիսպներուն վերայ ել-
նեն, Դաւիթ բերդին վերէն, պատե-
րազմեցաւ, իսկ իւր Անիկմար օգնաց
կանը, Հալի—ձորոյ Տէր Վւետիքն ու

200 զօրականքագաղտնի ճամբով ըերեւակու յուղարկեց, որք թշնամեաց ետևէն սկսան պատերազմիլ, ու որով մէկ օրու ան մէջ 13 հազար մարդ չարաց գեցին մացեալները փախցընելին յետոյ՝ 48 դրօշ ունշատսաւարձառած Դաւթիսմօտեղարձան; ցիոնին ափազօք յևս Դաւթիմէն յետոյ իշխեց Աինեաց ձայերուն իւր Ախիմարա անովանս պարտելի օգնականը բայց Ամենդքարոր շատի չքշեց, վաճաղի վերոյիշեալ ատէր Աւետիսքահանայն և սնշատերուն նման տգէտ ու փառասէր լինելով Ախիմարայի հետ իսութեցաւ և ժողովորդը երակուսիրամնեց, որ Տաճիկները լսելով նորէն Աինեաց աշխարհին վերայ ցարձակեցան, ու բերդը պաշարելով՝ մէջ ջինները նեղեցին; Ծայց որովհետեւ այդ բերդին ամէջ ևս եղբայրատեցու թեան




ԴԱՎԻԹ ՍԻՒՆԻ.

սոսկալի ախտը տեղիք գտած էր, ուստի
տէր Աւետիսին կուսակիցները՝ Վիր-
թարէն ծածուկ անձնատուր լինել մտա-
ծեցին, որոյ մասին պատգամաւոր զնաց
նոյն իսկ տէր Աւետիսը; բերդը մտնելէն առաջ թէւ ջա-
ճիկները երդում արին ամեննեին վսաս
չանել չայոց, բայց բերդը մտնելէն յե-
տոյ ժողովրդոց մեծ մասը թրէ անցու-
ցին. իսկ Վիրթար, տէր Աւետիսին
միտքը վաղուց իմանալով՝ Տաճիկները
չհասած՝ մեծ զգուշութեամբ փախաւ
բերդէն. բայց և այնպէս օտար թրշ-
նամիներէն ազատուելով, ընտանի դա-
ւաճաններէն ազատիլ չկարողացաւ. վասն
զի Խնձորէս+ կոչուած բերդը պաշարած
ժամանակ, մինչդեռ պատերազմէ յոդ-
նած՝ քիչ մի քնանալու պառկեցաւ,
քովի մարդիկը Պարսից հաճոյանալու

Համար գլուխը կտրեցին ու Դավթէ՛ժ
նստող Պարսիկ բդէշխին տարին, յորմէ
փոխանակ պարզեխ՝ իւրեանց անզգա-
մութեան արդար հատուցումն առին:
Վասն զի բդէշխը Մխիթարայքաջու-
թիւններուն տեղեակ յինելով՝ արդա-
րութեամբ դատեց, ու „Դուք, որ
„այդպիսի քաջ անձին կեանքը անպի-
„տան ու մասսակար համարեցիք ձեզի,
„ուրեմն ձերը ի՞նչ բանի պիտի հար-
„կաւորի մեղ, ով անգութ ու դաւա-
„ճան մարդիկ“ ասելով՝ ամենքը մէ-
կէն սպաննել տուաւ:

Դակ Մխիթարայ հաւատարիմ մար-
դիկը Յովհաննէս իշխանին քովզ գնա-
ցին, որ Տաճկաց դէմ Ուտէացոց աշ-
խարհին մէջ մէծ քաջութիւններ կա-
նէր: Սա Մխիթարայ գլխուն եկածը
լսելով՝ սկսաւ կասկածիլ իւր մարդկանց



ԱՆԱՍԻ, ՔԱԶ ԵՐԵՑԱՍԱՐԴ.

դաւաճանութենէն, և ինքիրմէ Ուտէ-
ացւոց աշխարհը Տաճկաց յանձնելով
ելաւ Ուուսաստանի Աժտէրիստն քաղա-
քը գնաց, ուր մեծ պատուով ապրեց
ու խաղաղութեամբ մեռաւ:

Յովհաննէսէն յետոյ անուանի եղաւ
Շերակ գաւառին մէջ Եւստի անունով
քաջ երիտասարդը (1820 — 1827), որ
պարսիկ ու քիւրտ բէյէրու յարձակ-
մունքէն՝ Անի քաղաքն ու նորա մեր-
ձակայ զեղերը պաշտպանեց: Այս եղը
1827-ին Պարսից և Ուուսաց պատե-
րազմին մէջ մեծամեծ քաջութիւններ
անելէն վերջը՝ մէկ դարանակալ պար-
սիկէ զարնուելով՝ մեռնելու վերայ էր,
արիւնը ձեռքին մէջ առաւ, դէպ ի
Ամասիս երկրնցուց, և „Ի՞նդունէ Հայ-
ստան, քու սիրոյդ համար թափած
արիւնս“ ասելով՝ հոգին փչեց ու հայ-
րենասիրաց կարգն անցաւ:

Եյս պատերազմէն վերջը Հայաստանի մէկ մասն ևս 1827 թ. Ոռուսաց ձեռքն անցաւ:

Ոռուսաց տէրութիւնը իւր հպատակ Հայոց հետ՝ ամենայն մարդասիրութեամբ վարուեցաւ: Այս յայտնի ապացոյցն է բոլոր Ոռուսիաբնակ Հայոց խաղաղ վիճակը, որք իւրեանց հաւատարիմ հպատակութեամբն ու ճշմարիտ ծառայութիւններովը Ոռուսաց մեծամեծներուն սիրելի լինելով՝ ամեն աստիճանի մարդիկ՝ ամենայն ժամանակէն աւելի պատույ մէջ են, և այժմ գիտութեամբ ու կրթութեամբ յառաջանալու վերայ են:

Երեւեան (1852 — 55) և Ոռուս Տաճկական (1877 — 79) պատերազմներու ժամանակ Տաճկաց հպատակ Հայոց լազարեալ շատ նեղութիւններ կրեցին Հայ-

աստանի մէջ քիւրտերէն ու նոյն իսկ տիրապետող Տաճիկներէն: Եւ թէպէտ կ.-Պոլսոյ Կերսէս ազգասէր պատրիարքին իրաւացի բողոքներուն ու խնդիրներուն զիջանելով՝ եւրոպական տէրութիւնները մեծամեծ խոստմունք արին Հայերը պաշտպանելու և նոցա քաղաքական իշխանութիւն տալու համար, սակայն զանազան պատճառներով իրենց խոստմունքը չկատարեցին, որով մինչև ցայժմ առաջուան անորոշ վիճակին մէջ մնաց Տաճկաստանի Հայոց խնդիրը: Եյս մասին, ինչպէս Ոռուսաստանի, նոյնպէս և Տաճկաստանի Հայոց յոյսը մի միայն Ոռուսաց Ամենողորմած Կայսեր և նորաքրիստոսասէր ազգին վերայ դրուածէ, որ ժամանակով՝ ուրիշ տաճկահպատակ քրիստոնէից նման՝ Տաճկաց բռնութենէն կազատցընէ նաև մեր աղդը:

թայ մին' ու մէջմայսից. Հմ վաստա
 ու ժիշտել ոչ : մէջմայիշաշ բառքարայիս
 զայլյառար դժուռքը ուխովը՝ բարսի-
 ցիքը ու մէոյժմզօրոյ վյառաղի միջ.
 առյժմ մայլայտող ու Խոյմահիք մոյժմ
 միջա զմանետուոյ ծմեռճճե զգանելինի
 արաց արու և այժմարուցար ցրծաւ-
 շանաշ այս մոյնի ամենափշի մարտաց.
 ըմելի խողձնունուայ մարտանը մշայան
 մշայի խոյս մէջմայտի զգմանետուոյ
 Հմ միջանձի չողուն մատիւու և ենցը
 ցիքիւնը ցոյս վեճառայիշաշ բան
 մին', վաստառաւ Ու միջմի միջուն ու Հ
 մ ցոյց ցոյս վեճառայիշանը և սիս
 և դժուռք ծանկարումն ըստու մշայի
 առարք բայմի միջուն վեճառասիզզ ազու
 այս այիշան ցից Խոյմանենե զու և
 առուց ցոյշաշ մուն ցիչմանուզզ իստ
 պրյա զան մուն' Խոյմարով ոխոն Ե

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Խ Ը Ա Ն Ո Ւ Թ Ի Կ Ա Վ Ա Զ Կ Ա Զ Ա Ն Յ	
.06 Ա բառական 022 .6 ճանակ 022 Քիանոսուն յառաջ.	
2107 Հոյկ 50 տարի.	1197 Հօրոյ 3.
2026 Արմենակ 46.	1194 Զարմայր 12.
1980 Արամայի 40.	1180 Շաւարչ Բ. 44.
1940 Ամասիա 32.	1137 Պերճ Ա. 35.
1908 Գեղամ 50.	1102 Արբու 27.
1858 Հարմա 32.	1075 Պերճ Բ. 40.
1827 Արամ 58.	1035 Բաղուկ 50.
1769 Արայ 26.	985 Հոյ 44. Հ. Ա ֆուրար Բ 031
1743 Կարդոս 18.	941 Յուսակ 31. Տ. Ա ֆուր Դ 021
1725 Անուշաւան 60. 08 դար Հ 4	910 Ամբակ Բ. 273 ուշաւան Ա 11
1662 Պարես 50.	883 Կայզուկ 45. Գ ճադր 8 08
1612 Արքակ 40.	838 Փառնաւաշ Ա. 17.
1568 Զաւան 37.	805 Փառնակ Բ. 40.
1531 Փառնակ Ա. 53.	765 Սկայորդի 17.
1478 Արք 25.	748 Պարոյր 5 ճանակու բարդ 01
1433 Հաւանակ 30.	743 Պարոյր թագաւոր կը Բ 16
1403 Ա. աշտակ 42.	պակուկ 44. 08 քաղաքան 88
1381 Հոյկակ Ա. 18.	700 Հրաչեայ 42. Գ ճանակ 80
1363 Ամբակ Ա. 14.	678 Փառնաւաշ Բ. 18. յառակ 88
1349 Անակ 17.	665 Պառոյր 35. Հ դրամակ 021
1332 Շաւարչ Ա. 6.	630 Կոռնակ 8. 12. Ա ճանակ 18.1
1326 Նորայր 24. 81.	622 Փառս 17. 02. Գ ճանակ 281
1302 Վաստակ 14.	605 Հոյկակ Բ. 36. Հ դրամ 101
1289 Կար 4.	569 Երուանդ Ա. Բ. 4. Ա յառակ 818
1285 Գոռակ 18.	565 Տիգրան Ա. 45. դրամ Ա 702
1267 Հրանտ Ա. 27. Գ դրամ	520 Վաշտակ 27. ուշաւան 022
1242 Լնձակ 15.	493 Առաւան 18. Ա դրամ 882
1227 Գողակ 30.	475 Ներսէ 35. Ա տարի 082

- | | | | |
|-----|------------|-----|----------|
| 410 | Զարեհ 46. | 371 | Աշն 20 |
| 391 | Արմեդ 9. | 251 | Աւետ 23. |
| 385 | Բայդամ 14. | | |

Հ Օ Ռ Ա Կ Ո Ւ Ա Կ Ա Լ Ք

- | | |
|-------------------|---------------------------|
| 325 ՄԵՒՐԱՆ 5. | 239 ԱՐՄԱՆԱԿ Ա, 50. |
| 319 ՆԵՐԱՊԱՂՈԽՈ 2. | 189 { ԱՐՄԱՂՅԱ ԶԱՀՐԱՅԻ 30. |
| 317 ԱԳՈՎԱՐԳ 35. | |
| 281 ՀՐԱՆՏ Բ, 45. | 159 ԱՐՄԱՆԱԿԴ 10. |

ԹԱԳԱՌՈՐՈՇԹԻՒՆ ԱՐՃԱԿ

- | | | | | |
|-----|--------------------------------|-----|-----|-------------------------|
| | | | | |
| .01 | Հ Աբրիսանուէն յառաջ. | | .22 | անդամ |
| .00 | Վարչութեան | | .88 | Կազմու |
| 149 | Ա աղարշակ Ա, 22 սարի. | 588 | 55 | Արտաւազ Ա, 5.22 պահ |
| 127 | Արշակ Ա, 13.-16 ֆաւաթ | 110 | 30 | Արշամ 40. |
| 114 | Արտավազ Ա, 257 ֆավաթ | 010 | 1 | Արգար 38.00 ճամացալ օքտ |
| 89 | Տիգրան Բ, 546 ֆարան | 888 | | .00 ուժամբ 2001 |
| | Դ Հայուանուփ | 888 | | .00 անցամ 2101 |
| | .01 Հ Վաճառքի բրիսանուէն յետը. | | .78 | մասու 8861 |

- | | | | | |
|-------|-------------------------------------|-----|--|---------------------------------------|
| 30 | Աբգար քրիստոնեաց կմկնութիւն | 301 | Ս. | Հոփիսմեանք Հիմայացանալ |
| 34 | Անահեղ 4 արքան Եղիսաբեթ | 317 | կույն. | .08 ֆանտազ 2841 |
| 38 | Ասմատուկ 30. և դաշտաբա | 320 | Տըդատ ազդովիմիւն կմկնութիւն | 2841 |
| 68 | երրանդ Բ., 20. սահման 007 | | քրիստոնեաց կմկնիւն. խաչած | 2841 |
| 88 | Արտաշես I , 141 առաջնորդ | 310 | 341 | Տըդատ կմեռնիւն. Ո. ֆանֆար 2841 |
| 129 | Արտաւազդ Բ., 2. Տնինար 660 | 344 | Խոսրով Բ., 9. Տ. Շ. ֆանտազ | 2841 |
| 131 | Տեղան Ա., 21. 8 ֆանտազ | 353 | Տիրան Բ., 11. Ա. ցրանց | 2841 |
| 152 | Տեղան Գ., 22. 71 տուար 229 | 363 | Արշակ Բ., 18. 42 ցաղար | 2841 |
| 194 | Վաշարչ 2018. 4 ֆանցան 700 | 381 | Պապ 3 կամ 7. 1 խոսք | 2841 |
| 214 | Խոսրով Ա., 45. Յ դամարդ | 368 | Մեծն Ներսէս կմեռնիւն. դար | 2841 |
| 257 | Ս. Գրիգոր Խօսաւարդիւն կմանիր | 384 | Վարազդատ 2-81 ֆանտազ | 2841 |
| (259) | Արտաշեր Հայաստանի կոմիտէ 25. | 386 | { Արշակ Գ., 3. Ա տաճառ 7821
283 Ըսպուհ կոմիտէ 2ինաւուն 664 | { Վաշարչակ Բ., Վ. Ֆ. ֆանց 7821 |
| 286 | Տըդատ 56. .06 Հանդար 574 | 385 | Խոսրով Գ., 4. .06 ֆանֆար | 2841 |

Կ Ե Ւ Ր Ա Պ Ա Հ Ա Տ Ա

- | | | | |
|-----|-------------------|-----|-------------|
| 332 | Դաւիթ 4. | 685 | Ալուս 4. |
| 336 | Թէոդորոս 7. | 690 | Կերոսէ 4. |
| 343 | Վարազտիրոց 8 մին. | 695 | Սմբատ 9. |
| 344 | Սմբատ 10. | 743 | Ալուս 15. |
| 354 | Համազապուհ 5. | 760 | Սահակ Բ, 6. |
| 359 | Գրիգոր 24. | 835 | Բագարատ 14. |

በ ሰ. ማ. በ. የ. እ. ዘ. የ. የ.

- | | |
|-----------------|------------------|
| 93 Արդէլս 2. | 769 Պէրիր 9. |
| 04 Կաշմ 13. | 778 Հասան 3. |
| 17 Վեհէ 10. | 786 Եղիս Բ. 12. |
| 27 Մահմէտ 5. | 798 Խուզիմայ 20. |
| 32 Արդապեկ 10. | 818 Հու 17. |
| 42 Արուան 1. | 848 Ապուսէթ 1. |
| 58 Եղիս Ա. 2. | 850 Բաշը 5. |
| 66 Սիւլէյման 3. | 855 Շեիս 4. |

- | ԹԱԳԱԿԱՐՈՒԹԻՒՆ ԲԱԳԻՐԱՏՈՒՆԵԱՑ | | ՀԱՅ |
|-----------------------------------|-------------------------------------|--|
| 889 | Ալսա Ա, 26 տարի. | 977 Սմբատն Ռ, 12 տարեամաց |
| 885 | Ալսա Ա թագաւոր կառակով | 989 Գաղիկ Ա, 29. |
| | ու հինգ տարի կժագաւանրէ. | 1020 Ցովհաննես 20. |
| 890 | Սմբատ Ա, 23. | 1042 Գաղիկ երկրորդ կամ վերջին 3. |
| 914 | Աշոտ Բ, 14. | 1046 Բազրատունեաց տէրութիւնը |
| 928 | Ալսա 24. | վերջացաւ. |
| 952 | Ալսա Գ, 26. | 1079 Գաղիկ Բ սպանուեցաւ. |
| ՎԱՍՊՈՒՄԿԱՆՔ ԵԽ ԿԱՐՄ ԹԱԳԱԿԱՐՈՒՆԵՐԸ | | ՀԱՅ |
| 908 | Գաղիկ Արծրունի 29. | 972 Սենեկիրիմ 55. |
| 921 | Ալսա Շապուհեան 15. | 1022 Սենեկիրիմ Սերաստիա վճաց. |
| 937 | Դերենիկ Ալսա 16. | 59 տարուան մէջ երեք յա- |
| 953 | Արտօսահ 19. | չորդի ունեցաւ (1022—1080), |
| 962 | Ալսա Սահակ 14.
Գուրգէն Խաչիկ 32. | յես որոյ նոցա իշխանութիւնը
գաղիկցաւ : |

ԹԱԴԱՏՈՐՈՒԹԻՒՆ ՌԱՏԵԲԻՆԵԱՆՑ.

- | | | | | | | | | | |
|------|-----------|------|--|-------|------|-----------|--------|-----|---------------|
| 1080 | Ուուրեն | Ա, | 15. | տարի. | 1224 | Հեթում | Ա, | 45. | ապրիլի 30 |
| 1095 | Կոստանդին | Ա, | 5. | տարի. | 1269 | Լեռն. | Գ, | 20. | ընդհանուր 410 |
| 1100 | Թորոս | Ա, | 23. | տարի. | 1289 | Հեթում | Բ, | 4. | մայիսի 14 |
| 1123 | Լեռն | Ա, | 15. | տարի. | 1293 | Թորոս | Գ, | 2. | մայիսի 40 |
| 1144 | Թորոս | Բ, | 24. | տարի. | 1296 | Սմբատ | 2. | 12. | մայիսի 60 |
| 1168 | Թովզմաս | պայտ | 1. | | 1298 | Կոստանդին | Բ, | 2. | |
| 1169 | Մշեհ | 5. | | | 1300 | Հեթում | Բ, | 5. | Լեռտափն 5. |
| 1174 | Ուուրեն | Բ, | 11. | | 1305 | Լեռն | Դ, | 3. | |
| 1185 | Լեռն | Բ, | 14. | | 1308 | Օլին | 12. | | |
| 1198 | Լեռն | Բ | [թագաւոր կո-
ծով և 21 տարի կ'թա-
գաւորէ. | | 1320 | Լեռն | Ե, | 22. | |
| 1219 | Զաքէլ | 1. | | | 1342 | Կոստանդին | Գ, | 1. | |
| 1220 | Փիլիպոս | 2. | | | 1343 | Գուրեգն | 2. | | |
| | | | | | 1345 | Կոստանդին | Գ, | 18. | |
| | | | | | 1365 | Լեռն | Վերջին | 11. | |

- | | | | |
|-----|------|---|---------|
| 10 | -86 | զարդ մէջին մէջ քառականց գործ առաջ | գործ |
| 07 | -10 | ՅԵԿԱՆԻ ՄԵՐ ԹԱՅԻ ՈՅ | թարգման |
| 17 | -07 | բղանդ սկասալով մէջին մէջ մէջամբ | մէջ |
| 88 | -67 | տարցի մէջին մէջ բղանդ սկասալով | մէջ |
| 78 | -88 | ԳՈՒԽԻՆ ԱՌԱՋԻՆ խորու մէջին մէջ | մէջ |
| 90 | -78 | բղանդ խորու մ տարցի | մէջ |
| 201 | -98 | Ի ՀԱՄԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱ ԶԱՅՑ | մէջ |
| 80 | -101 | տարցայա և ա խաթ | ա |
| 91 | -101 | Հայկեն մինչեւ Արմենակ | 5—8 |
| 101 | -101 | ա հայութա և խաթաւու թ պատու | ա |
| — | Բ. | Հայկաց յաջորդներեն մինչեւ Արամ | 9—13 |
| 811 | -111 | ա ա ա ա շատութաւու թ պատու | ա |
| — | Գ. | Արամ և նորա քաջութիւնները մէջ թ խորու | 14—23 |
| — | Դ. | Արայէն մինչեւ Պարսց պատութիւններ մաս և ա | 23—29 |

ԹԱԳ-ԱԿՈՐՈՒԹԵԿՆ ՀԱՅԿԱԶԱՑ

- | | |
|--|-------|
| — Ե. Պարույրէն մինչև Հայկազանց թագաւորութեան վեր . | 29—30 |
| — Հանալը | 30—31 |
| — Այսպահանք առաջին մարդու կուտսեսէք. | 31—32 |
| — Ե. Միհրանէն մինչև Արտավազդ վերջնույն | 32—33 |
| — Քաղաքածու պատմութեան վերջնույն | 33—34 |
| — Բ. Հայկէն մինչև Պարույրի թագաւորէլը | 40—41 |
| — Բ. Պարույրէն մինչև Հայկազանց թագաւորութեան վեր . | 42—43 |

ԳԼՈՒԽԱ ԵՐԿՐՈՋ

- | | |
|-------------|-------------------------------------|
| ԹԱԳԱՆՈՒԹԻՒՆ | ԱՐՀԱԿՈՒՆԵԱՅ. |
| Դաս Փ. | Վաղարշակէն մինչև Արշակ առաջին |
| — ՃԱ. | Արշակ առաջինէն մինչև Տիգրան Երկրորդ |
| — ՃԲ. | Տիգրան Երկրորդ և նորաքաջութիւնները |

ԳԱՅՈՒՄԻՔ ՊԱՏՐՈՒԹՅՈՒՆ

- | | |
|--|---------|
| — Բ. Վաղարշակէն մինչեւ Մբեծն Խոսրով | 139—142 |
| — Բ. Մբեծն Խոսրովու թագաւորելէն մինչև Արշակուն
նեաց թագաւորութեան վերջանալը | 143—146 |

ԳՐԱԴԱՐԱՆ ԿՐՈՆՐԴ

ԹԱԳ-ԱՆՈՐՈՒԹՅԱՆ ԲՈՒՎՈՅՈՒՅՑ ԿԱՂ

- | | | |
|-------|--|---------|
| — Եթ. | Աշոտ Բագրատունի. և Միհայ առաջին. | 147—154 |
| — Լ. | Աշոտ երկրորդ և Ալբաս. | 154—162 |
| — Ան. | Աշոտ երրորդ Են մինչև Թամթարաց արշաւանդը. | 163—169 |
| — Լթ. | Սկիւթացի Թամթարաց արշաւանդըն մինչև Գագիկ | 176 |
| ՏԸ | Երկրորդի թագաւորիւր. | 169—175 |

- | | |
|---|---------|
| Դաս 1.Գ. Գաղպիկ երկրորդէն մինչև Բագրատուննեաց թագավառութեան վերջանալը | 176—181 |
| — Լ.Դ. Քաղցուաճք պատմութեան Բագրատուննեաց թագավառութեան | 182—184 |

ԳԱՐԵՆ ԶՈՐՈՅԱՐԴ

ԳԱՐԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԵԼՈՎ

- | | |
|--|---------|
| — Ա. Ռուբեն առաջնէն մինչև Լեռն երկրորդ | 185—190 |
| — Ա. Լեռն երկրորդէն մինչև Հեթում երկրորդ | 191—197 |
| — Ա. Հեթում երկրորդէն մինչև Ռուբինեանց թագաւորութեան վերջանալը | 198—202 |
| — Ա. Քաղսւաճք պատմութեան Ռուբինեանց թագաւորութեան | 203—205 |
| — Խ. ՀԱՅՈՍՏԱՆԻ Պարսից, Տաճկաց և Ռուսաց հիմանութեան տակ | 207—219 |
| Ճամանակագրութիւնք | 217—220 |
| Ցանկ նիւթեոց | 221—223 |

182-183 արանի զամանակաշրջան մշտի մէլքորդից մէրաբը մ.թ. առաջ
183-184 առանի զամանակաշրջան մասն մասն օր պահանջական մասն են առաջ

የኢትዮጵያ ማኅበር

• ४५८ एकादशीमी तिथि विजयाधार्मिक

- | | |
|---------|--|
| 188—190 | բղողիկ մակլ մշտիս մշտիսաւ մնդութեաւ միւ |
| 191—193 | բղողիկ նաև նիւ մշտիս մշտիսաւ մնդութեաւ
ուղարկաւ նի ըմանմինութեաւ մշտիս մնդութեաւ նի |
| 194—196 | նաև նիւ ըմանմինութեաւ մնդութեաւ նի |
| 197—199 | նաև նիւ ըմանմինութեաւ մնդութեաւ նի |
| 200—202 | ուղարկաւ նի ըմանմինութեաւ մնդութեաւ գիւղաւացաւ
մակլեաւ |
| 203—205 | ուղարկաւ նի ըմանմինութեաւ մնդութեաւ գիւղաւացաւ
մակլեաւ |
| 206—208 | ուղարկաւ նի ըմանմինութեաւ մնդութեաւ գիւղաւացաւ
մակլեաւ |
| 209—211 | ուղարկաւ նի ըմանմինութեաւ մնդութեաւ գիւղաւացաւ
մակլեաւ |
| 212—214 | ուղարկաւ նի ըմանմինութեաւ մնդութեաւ գիւղաւացաւ
մակլեաւ |
| 215—217 | ուղարկաւ նի ըմանմինութեաւ մնդութեաւ գիւղաւացաւ
մակլեաւ |
| 218—220 | ուղարկաւ նի ըմանմինութեաւ մնդութեաւ գիւղաւացաւ
մակլեաւ |

ՀՀ. Ազգային գրադարան



NL0341641

